

# Սյունյաց Երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 31 ՀՈՒՆՎԱՐԻ 2019Թ.  
№ 2 (492)

www.syuniacyerkir.am

*Թող ո՛չ մի զոհ  
չպահանջվի ինձնից  
բացի...*

Եղիշե Չարենց



## Պաշտոնանկ է արվել Քաջարանի կոմբինատի ստրուկտուրայի տեսչական մարմնի ղեկավարը. ինչո՞ւ

Բնապահանջության եւ ընդերքի տեսչական մարմնի նախկին ղեկավար Արթուր Գրիգորյանը հունվարի 21-ին՝ նշանակումից յոթ ամիս անց, վարչապետի որոշմամբ ազատվել է աշխատանքից: Ազատումից մեկ շաբաթ առաջ նրան փոխանցել են փոխվարչապետ Տիգրան Ավինյանի առաջարկությունն աշխատանքից ազատվելու դիմում գրելու մասին, ինչը Գրիգորյանը չի արել: Այնուհետեւ եղել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումը:

Ինչո՞ւ եւ ինչպե՞ս է Գրիգորյանն ազատվել աշխատանքից:

Սիվիլների թաթուկ Հակոբյանը գրուցել է Արթուր Գրիգորյանի հետ:

-Ումի՞ց իմացաք, որ ազատվել եք աշխատանքից, որտեղի՞ց իմացաք: Ձանգեցին եւ հայտնեցին, թե՞ կառավարության կայքից տեղեկացաք, որ էլ չեք աշխատելու:

-Իմանալն անակնկալ էր, բայց այնպես չէ, որ ինձ այդ մասին չէին ակնարկել կամ տեղեկացրել, որ կա այդպիսի տրամադրվածություն: Ամեն դեպքում գրույցի ընթացքում այդ մասին կխոսեմ՝ ներկայացնելով ամբողջական պատկերը:

-Դուք ամռանն եք սկսել աշխատել այդ պաշտոնում, ե՞րբ իմացաք, որ ուզում են Ձեզ ազատել այդ աշխատանքից:

-Դժվար է այդ հարցին ուղիղ տեսքով պատասխանել, որովհետեւ տարբեր խնդիրների վերաբերյալ կային տարբեր մոտեցումներ: Ամեն դեպքում ցանկանում եմ համակարգված ներկայացնել երկու հարց. առաջինը՝ ի՞նչ պատճառով եւ երկրորդ՝ ի՞նչ ձեռով: Քանի որ կա հանրային հետաքրքրվածություն, չեմ ուզում գործող կառավարությանը քննադատել կամ ներկայացնել ինչ-ինչ խնդիրներ: Մարդիկ ունեն թաղաքական թիմ, ես այդ թիմի մաս չէի կազմում, բայց իրենք ինձ ներգրավեցին կառավարության գործընթացում, ինչի շնորհիվ մեծ փորձ ձեռք բերեցի եւ շատ արժեքավոր ինֆորմացիա, եւ դա շատ գնահատելի է: Այդ առիթով միայն իմ գոհունակությունը կարող եմ հայտնել. չլինելով այդ թաղաքական թիմի անդամ՝ առաջարկում եմ լուրջ կառավարչական ֆունկցիաներ ունեցող կառույց ղեկավարել:

Երկրորդ՝ միեւնույն ժամանակ չեմ ուզում արհեստական կոռեկտություն լինի, պիտի բովանդակային հարցերի մասին խոսել, ի վերջո մարդիկ սպասում են, ակնկալում են լսել այն հարցադրումները, որ շրջանառվում են հանրության մեջ, դրանք վերաբերյալ պիտի տրվեն սպառնալի պատասխաններ: Գիտեք, որ վարչապետի աշխատակազմի ղեկավարն իր ֆեյսբուքյան էջում կատարել է գրառում, եւ այդ մեջ նշել են մի քանի պատճառներ, այդ մույնը նաեւ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի օգնականն է ներկայացրել լրագրողներին: Ասում եմ այն, ինչը նաեւ մասնավորապես երկրորդը եմ ընթերցել. նշված է իսկ առաջարկ կադրային նշանակումները եւ ազատումները միտված են առավել բարձր մակարդակի մասնագետների ներգրավմանը, կառավարության աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, առաջարկված նպատակների իրականացմանը:

-Այսինքն՝ ակնարկվում է, որ Դուք այնքան էլ բարձրակարգ մասնագետ չեք կամ

## Հունան Պողոսյան. «Անելու ենք ամեն ինչ, որ մարզպետարանի մասին հանրության կարծիքը լինի դրական»

Հունվարի 26-ին լրացավ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի պաշտոնավարման հարյուր օրը:

Իշխանավարության մեջ վաղուց ավանդույթ դարձած այդ շրջափուլի ավարտն առիթ է ամփոփելու պաշտոնավարման սկզբնական, ինչ-որ առումով մեկնարկային փուլը:

Այդ հանգամանքի մղումով էլ գրուցեցինք Հունան Պողոսյանի հետ:

- Պարոն Պողոսյան, նախ՝ շնորհակալություն գրույցի հրավերն ընդունելու համար: Դուք ստանձնել եք մի չքնաղ եւ գեղատեսիլ, նաեւ խնդրահարույց-խնդրառատ, տեսակի մեջ բարդ ու հետաքրքիր երկրամասի ղեկավարումը, որ Հայաստանում բոլոր առումներով բացառիկ լինելու նախադրյալներ ունի: Եվս մեկ անգամ շնորհավորում ենք Ձեզ եւ մաղթում բարի պաշտոնավարում, անաչառ սյունեցու խնդիրների ու

հոգսերի հանդեպ՝ սրտացավություն:

- Շնորհակալ եմ բարենախնայների համար, ձգտում եմ արդարացնել մարզպետի ինստիտուտից սյունեցիների ակնկալիքները:

- 2018թ. հոկտեմբերի 16-ին Սյունիքի մարզպետի պաշտոնում Ձեր նշանակումն ինչ-որ առումով անակնկալ էր:

Հատկապես մայրաքաղաքի որոշ շրջանակներում հուզական արձագանքներ եղան՝ պայմանավորված

էջ 4

## Վախճանվել է Սյունյաց աշխարհի արժանավոր զավակ Միեր Եղիազարյանը

Հունվարի 26-ին անսպասելի եւ հանկարծախա գույշոլ մտավ մեր դուռ-դարպասներից մերս. մահացել է Միեր Եղիազարյանը, եւ այդ բոլոր սգո թանձր մշուշ սփռեց ոչ միայն նրա բնօրրան Սիսիանի, այլեւ ամբողջ Սյունիքի վրա...

Մահկանացուն կնքեց ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում՝ առավոտյան ժամը 6:35-ին:

Ըստ նախնական տեղեկությունների՝ մահը վրա էր հասել սրտի աշխատանքի դադարի հետեւանքով:

Հունվարի 15-ից «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ներսում գտնվող բուժկետում էր՝ 44-օրյա հացադուլից հետո:

Բոլորս հույս էինք փայփայում, որ սրտանոթային հիվանդությունից վաղուց տառապող, 2-րդ կարգի հաշմանդամ Միեր Եղիազարյանը երկարատեւ հացադուլից հետո, այնուամենայնիվ, կվերականգնվի, կապաքինվի եւ ջանքերը կուղղի իր անձի շուրջ հյուսված մեղա-

դրանքի հերքմանն ու մերժմանը:

Ավա՞ր, այդ սպասումներն ի դերեւ եղան...

Միեր Եղիազարյանն անազատության մեջ էր հայտնվել 2018թ. դեկտեմբերի 3-ին, իսկ երկու օր անց, քննիչի միջնորդությամբ, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանն ընդունել էր որոշում՝ խափանման միջոցը կալանք ընտրելու մասին՝ երկու ամիս ժամանակով:

Տարեվերջին Միեր Եղիազարյանի պաշտպանը դատարան ներկայացրեց միջնորդություն՝ խափանման միջոց ընտրված կալանքը փոխարինելու գրավով:

Ընդ որում՝ միջնորդությանը կից ներկայացվել էին Ազգային ժողովի պատգամավորների երաշխավորություններ, բազմաթիվ դրական բնութագրեր, պետական բազում պարզելներ ստանալու մասին վկայագրեր, բժշկական փաստաթղթեր՝ ունեցած հիվանդությունների վերաբերյալ:

Սակայն Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը հունվարի 14-ին



էջ 3

էջ 6

# Կարինե Հովսեփյան. «Պիտի հիմնովին փոխվի վերաբերմունքը հանրակրթության նկատմամբ»

Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան N 7 հիմնական դպրոցը մարզկենտրոնի համեմատաբար «երիտասարդ» կրթօջախներից է՝ հիմնադրված 1970 թվականին: Առաջին տնօրենը եղել է Կիմ Ստեփանյանը, ում փոխարինել է Տիգրան Թեւանյանը: 1980 թվականից դպրոցի ղեկավարությունը ստանձնել է Արմո Մկրտչյանը: 2010 թվականից դպրոցը միջնակարգից վերակազմավորվել է հիմնական դպրոցի: Ութ տարի է, ինչ կրթօջախը ղեկավարում է Կարինե Հովսեփյանը, ում աշխատանքային գործունեությունն այդ դպրոցում չափվում է 33 տարով:

2017 թվականի օգոստոսից սկսվել է դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի շինարարությունը, իսկ դասերն անցկացվում են այլ տեղերում, ինչը որոշակի դժվարություններ է հարուցել կրթական գործընթացում:

Այս եւ այլ խնդիրների մասին է հարցազրույցը դպրոցի տնօրեն Կարինե Հովսեփյանի հետ:

**- Մարզկենտրոնի կրթօջախներից Ձեր դպրոցը յուրահատուկ է նրանով, որ ուսուցումն իրականացվում է տարանջատ՝ պայմանավորված դպրոցական նոր համալիրի կառուցումով: Ե՞րբ այս ամենի վերջը կդրվի:**

- Այս կարգավիճակը յուրօրինակ մարտահրավեր է մեր դպրոցի ուսուցիչներին, աշակերտներին: Մի ամբողջ ուսումնական տարի երեք տեղում ենք դասընթաց կազմակերպել՝ Հայաստանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի մասնաճյուղի շենքում, նախկին Լուսատեխնիկական գործարանի վարչական շենքում եւ թիվ 6 դպրոցում: Հատկապես դժվար էր ձմռան ցուրտ ամիսներին, երբ ջեռուցման խնդիր կար: Այստեղ փայտով ջեռուցվող վառարաններ ենք տեղադրել, անհրաժեշտության դեպքում էլ էլեկտրասալիկներ ենք օգտագործում, իսկ թիվ 6 դպրոցում ջեռուցման լուրջ համակարգ է գործում: Քանի որ 6-րդ դպրոցում պայմանները համեմատաբար բարվոր են, այնտեղ 1-6-րդ դասարանի աշակերտներն են սովորում, իսկ այստեղ յոթ դասարանի ուսուցում է կազմակերպվում՝ հիմնականում բարձր դասարանների: Բացի դրանից՝ ուսուցիչների համար գնալ-գալու խնդիր կա: Դասացուցակը կազմելիս մեկ դասաժամ «պատուհան» ենք թողնում, որ ուսուցիչը մի դպրոցից մյուսը գնա եւ իր դասերը պարտապի: Պիտի ասեն, որ դպրոցի աշակերտների մի մասը ներգրավված է դպրոցական խմբակներում, որի համար հատկացված է 22 ժամ: Իսկ աշակերտների մի մասն էլ հաճախում է արտադպրոցական խմբակներ, որոշները մրցանակային տե-



ղեր են գրավում տարբեր մրցույթներում: Չնայած ստեղծված անհարմարություններին՝ մեր մանկավարժները երբեք չեն տրտնջացել, իսկապես լավ աշխատել են, եւ արդյունքներն առկա են. մարզային եւ հանրապետական առարկայական օլիմպիադաներում հիմնական դպրոցների թվում առաջատար տեղ ենք զբաղեցնում:

**- Ե՞րբ կտեսնեք նորանուսող կրթօջախի նոր մասնաշենք, ե՞րբ կրթական գործընթացը դպրոցում բնականոն հունի մեջ կընկնի: Որքանով տեղեկացանք, նաեւ հետետեղ էք դպրոցի նոր համալիրի շինարարության ընթացքին:**

- Անշուշտ, այն էլ՝ շինարարության առաջին իսկ օրվանից: Իմ աշխատասենյակից հստակ երեւում է շինհրապարակը, ժամանակ առ ժամանակ այդտեղ են լինում: Նույնիսկ շինարարները կատակում են՝ մեր երկրորդ աշխույժն է: Շնորհավորել ենք շինարարների Ամանորը, լավագույնը մաղթել: Համալիրի շահագործման վերջնաժամկետը ղեկտնեբերի 12-ն է: Իսկ շինարարները խոսք են տվել, որ լավ աշխատելու դեպքում նոր ուսումնական տարին նոր մասնաշենքում

կդիմավորենք: Կապրենք՝ կտեսնենք: Երկու կարծիք լինել չի կարող, որ մյուս ձմռանը հարմարավետ պայմաններում կկազմակերպենք ուսուցումը:

**- Մեկնարկել է երկրորդ կիսամյակը, ո՞րն է ուսուցման պրոցեսի ամենալուրջ մարտահրավերը:**

- Դպրոցի համար գերխնդիրը եղել է որակյալ ուսուցումը: Առաջին կիսամյակի ավարտին մանկավարժական խորհրդի նիստը կայացավ, մասնախմբերի նիստերը եղան, քննարկեցինք, վերլուծեցինք կատարված աշխատանքները, նախաձեռնեցինք անելիքները, հաջողությունները մերն են, դրանցով կարելի է ոգեւորվել, բայց խնդիր դրվեց թերությունները, բացթողումները տեսադաշտում պահել եւ աստիճանաբար վերացնել:

**- Ի՞նչ բնույթի թերություններ կան, դրանց շտկումը մեծ ջանքերի հե՞տ է կապված:**

- Դպրոցականների ուսման հետ են կապված: Նախ՝ աշակերտների մեջ մարել է ուսման ծարավը, գլուխ է բարձրացրել անտարբերությունը, դեռ ավելին՝ մեծ չափեր ընդունել, որոշ աշակերտների մեջ պարզապես բացակայում է սովորելու ցանկությունը: Մանկխորի նիստերի, այլ միջոցառումների ժամանակ այս հիմնահարցերին անդրադառնում ենք, փորձում ենք վեր հանել դրանց պատճառները, որոնք մեկ-երկուսը չեն: Դրանք պայմանավորված են դասագրքերի անկատարության, ուսուցչի, դպրոցի նկատմամբ ձեւավորված հասարակության, կասեի նաեւ պետական ոչ պատշաճ վերաբերմունքով: Պիտի հիմնովին փոխվի վերաբերմունքը հանրակրթության նկատմամբ: Մի դասարանում 35 աշակերտ է սովորում, իսկ տեխնիկական առարկաների դասավանդման ժամանակ խնդիրներ են ծագում՝ կապված աշակերտների նման թվաքանակի հետ:

**- Դուք մշեցիք դասագրքերի անկատարության մասին, քիչ ավելի մանրամասն այդ մասին, մանավանդ, որ պատմության մասնագետ եք: Չե՞ք բավարարո՞ւմ է այդ առարկայի դասագրքերի որակը:**

- Տպավորությունս այն է, որ պատմության դասագրքերը ծանրաբեռնված են թվերով ու փաստերով, մինչդեռ ավելի շատ տեղ պիտի հատկացվեր պատմական կարեւոր իրադարձությունների լուսաբանմանը: Տեխնիկական առարկաների դասագրքերից առանձնապես զանգատներ չեն լսել:

Նաեւ այն համոզումն ունեն, որ պարտադիր տեստային աշխատանքները պիտի վերանան

## Զորակոչը Սյունիքի մարզկենտրոնում

Հունվարին զանգվածային լրատվամիջոցների թեմաներից է ձմեռային զորակոչը: Հայաստանի զինված ուժերի համալրման այդ միջոցառումը շարունակվելու է մինչեւ ամսվա վերջը, իսկ զորակոչի անդրանիկ հավաքը մարզկենտրոն Կապանում մեկնարկեց հունվարի 13-ին:



Ձինակոչիկների համար հազեցած այդ օրը սկսվեց զինկոմիսարիատի շենքից, որտեղ օրակարգը ներկայացրեց Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը: Նա ապագա զինվորներին, մասնավորապես, հայտնեց, որ պաշտպանության նախարարի հրամանով այս տարվա ձմեռային զորակոչի ընթացքում ժամկետային զինծառայողները կարող են ունենալ բջջային հեռախոս, որոնք չպետք է ունենան տեսա եւ լուսանկարահանման, ինչպես նաեւ համացանց մտնելու հնարավորություն:

պատերազմի մասնակիցներ, վետերաններ, զինակոչիկների հարազատներն ու մտերիմները: Բացելով հանրահավաքը՝ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը մշեց, որ ապագա զինվորներին կյանքի այդ կատվածում՝ զինծառայողության ընթացքում փորձություն է սպասվում, բայց փոքր - ինչ չի կասկածում, որ նրանք կհաղթահարեն այդ փորձությունը: Նաեւ հորդորով դիմեց զինակոչիկներին՝ հպարտության, պատվի եւ արժանապատվության բարձր զգացումով կծառայեք:

սեփյանը, Ապրիլյան պատերազմի մասնակից Արթուր Ստեփանյանը՝ զինակոչիկներին անփորձանք ծառայություն եւ բարի վերադարձ մաղթելով:

Ապագա զինվորներին ողջերթի խոսքեր հղեց Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը, ով իր խոսքում մշեց, որ բանակը մի առանձնահատուկ դպրոց է, որի քուրայով պիտի անցնի յուրաքանչյուր հայ երիտասարդ, քանզի այդ դպրոցում երիտասարդը ձեռք է բերում ինչպես տղամարդկային հատկանիշներ, այնպես էլ ռազմական գիտելիքներ ու զինվորական կարգապահություն:

Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը, ամփոփելով ելույթները, զինակոչիկներին հորդորեց ծառայության ընթացքում հմտորեն տիրապետել ռազմական տեխնիկային, իրենց ամրագրված զենքին, քանզի դրանով է պայմանավորված յուրաքանչյուր զինվորի մարտունակությունը, մարտը վարելու հմտությունը:

Ձինակոչիկներին բարեմաղթանքի խոսքեր հղեցին Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Ջոհրաբ Առաքելյանը, Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը, Երկրագահի կամավորների միությունից՝ Սուրիկ Հով-

Այդ օրն անմախաղեպ մարդաշատ էր Գարեգին Նժդեհի հուշահամալիրում: Այս զորակոչին բանակ էր մեկնում 58 զինակոչիկ: Նրանց մեջ կային նաեւ արտերկրից եկածներ: Ռազմիկ Շամիրյանը ծնվել է մեծաքանակ Կոլզոգորտում, չորս ամիս առաջ է առաջին անգամ եկել Հայաստան: Հայերեն հասկանում է, սակայն դեռեւս վարժ չի տիրապետում մայրենի լեզվին: Բայց դրանից բնավ չի նեղարտում: Ասում է՝ կարելուրն այն է, որ իր հայրենակիցներով է շրջապատված, լեզվական արգելքը շատ շուտով կհաղթահարի:

Ձինակոչիկների համար առաջին անհրաժեշտության պարագաներով փաթեթներ էին

պատրաստել Կապանի եւ Քաջարանի համայնքապետարանները, որոնք հանձնվեցին բանակ մեկնողներին: Վերջիններս էլ, որպես հարգանքի տուրք, մեկական ծաղիկ դրեցին Գարեգին Նժդեհի հուշարձանին եւ հանրահավաքում ելույթ ունեցածների հետ լուսանկարվեցին՝ որպես ունեռանձալի հուշ՝ հիշարժան օրվա:

\*\*\*

Հայոց զինված ուժերի ձմեռային բարձրագույն գործընթացը շարունակվում է: Հունվարի 23-ին Կապանում տեղի ունեցավ ձմեռային զորակոչի երկրորդ հավաքը: 35 զինակոչիկ մեկնեց հայոց բանակ՝ կատարելու իր սահմանադրական պարտքը: Այդ առիթով կայացած հանրահավաքում հայրենիքի ապագա պաշտպաններին բարեմաղթանքի խոսքեր հղեցին Սյունիքի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը, Կապանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը, Սյունիքի մարզպետարանի զորահավաքային բաժնի պետ Արսեն Գրիգորյանը, Կապանի համայնքապետարանի գյուղատնտեսության եւ հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Ավետիք Համբարձումյանը, զինակոչիկ Օգեսն Միրզոյանի Նվարդ տատը: Հրապարակվեց Մատաղիսի զորամասի հրամանատարության շնորհակալական նամակը Կապանի զինկոմիսարիատի կողմից զորակոչված Նարեկ Խաչատրյանի օրինակելի ծառայության մասին: Նարեկ Խաչատրյանը, ով արդեն ավարտել է զինծառայությունը, բանակ զորակոչվող իր կրտսեր ընկերներին պատգամեց զգոն ու աշխուրջ լինել զինծառայության ժամանակ, անքերի կատարելու հրամանատարների կարգադրություններն ու հրամանները:

Սյունիքի զինկոմիսարիատի կողմից երախտագիտություն հայտնվեց Կապանի եւ Քաջարանի համայնքապետարաններին՝ զորակոչին օժանդակելու համար: Այս անգամ եւս տեղական իշխանությունների կողմից զինակոչիկներին հանձնվեցին առաջին անհրաժեշտության պարագաներով փաթեթներ:

# Վախճանվել է Սյունյաց աշխարհի արժանավոր գավակ Միեր Եղիազարյանը

էջ 1  
մերժեց միջնորդությունը, որը, ըստ պաշտպանների, ակնհայտ անհիմն էր ու մինչև վերջ չպատճառաբանված: Միեր Եղիազարյանը կալանավորման առաջին իսկ օրվանից համաձայն չէր նախաքննական մարմնի գործողություններին եւ դատարանի որոշմանը եւ իր անհամաձայնությունը արտահայտելու այլ ձեւ չգտավ, քան հացադուլը:

Եվ դեկտեմբերի 5-ից հայտարարեց հացադուլ... Որքան էլ զարմանալի է, հանրապետության միակ հացադուլավորին չայցելեց Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը: Իսկ նրա գրասենյակի ներկայացուցիչների այցելություններին չհաջողեցին կոնկրետ գործողություններ:

Միեր Եղիազարյանի օրավուր վատթարացող վիճակին զուգահեռ պաշտպանները քանիցս գրավոր եւ բանավոր միջնորդություններ ներկայացրին՝ առաջարկելով նրան տեղափոխել հիվանդանոց, սակայն բոլոր դեպքերում մերժումի արժանացան:

Երկու անգամ կանչվեց շտապօգնություն, եւ Միերին տեղափոխեցին մայրաքաղաքի «Էրեբունի» հիվանդանոց, որտեղ էլ «հետազոտելուց հետո» արձանագրեցին՝ մտահոգվելու կարիք չկա:

Միերն այնքան համառ էր ու հետևողական հացադուլ հայտարարելու իր որոշման մեջ (որպես նախաքննական եւ դատական մարմինների գործողությունների դեմ անհամաձայնության արտահայտություն), որ իր ծնողների, ընկերների ու մերձավորների հորդորին անգամ՝ հացադուլը դադարեցնելու մասին, ընդամենը չգնաց:

Եվ 44 օր շարունակ քայլեց ինքնամարման չարչարանաց ճանապարհով:

Ու, որքան էլ ցավալի է, պատկան մարմիններից որեւէ մեկին չանհանգստացրեց պարզագույն հարցը՝ ինչո՞ւ է Հայաստանի Հանրապետության՝ անազատության մեջ գտնվող քաղաքացին անժամկետ հացադուլ հայտարարել...

Ամենատարբեր եւ անհիմն մեկնաբանություններից ու իրարամերձ ասելուներից գերծ մնալու համար նշենք՝ Միեր Եղիազարյանը կասկածվում էր կաշառքի միջնորդության փորձի մեջ, սակայն, ըստ պաշտպանական կողմի, դրանք իր մերձավորներից ու ծանոթներից պարտքով կան օրինական ծառայություններ կատարելու համար վերցրած գումարներ էին (հողվածների հրապարակում, հարցազրույցների կազմակերպում, իրավունքների, շահերի պաշտպանություն եւ այլն):

Տարակուսելիս այն է, որ, չսպասելով նույնիսկ նախաքննությունը սկսելուն, անտեսելով ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված անմեղության կանխավարկածը, ձերբակալման հենց առաջին օրը պաշտոնապես եւ ի լուր հանրության Միեր Եղիազարյանը հռչակվեց որպես հանցագործ:

Մի խոսքով՝ նա բանտարկյալ էր, որի մեղքը դեռեւս ապացուցված չէր, որի ենթադրյալ հանցանքների ուղղությամբ նախաքննությունը չէր ավարտվել, որի հանդեպ, ըստ էության, վախճանում էին կիրառել Հայաստանի սահմանադրությամբ, գործող օրենքներով նախասահմանված մարդասիրական քայլեր:

Ինչեւէ, այլևս չկա Միեր Եղիազարյանը: Մեր առջեւ նրա դեմքն է՝ հավիտենաբար հանգած, եւ մարդիկ սուգ են հաղորդում միմյանց՝ Սյունյաց աշխարհի արժանավոր գավակի անժամանակ եւ ողբերգական մահվան կապակցությամբ:

Միեր Եղիազարյանը ծնվել է 1968թ. հունիսի 24-ին Սիսիանի տարածաշրջանի Լծեն գյուղում:

Շամբի դպրոցն ավարտելուց հետո մասնագիտական կրթություն է ստացել Կապանի շինարարական տեխնիկումում, ապա բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտել Ռուսաստանի Դաշնության Աստրախան քաղաքում:

Ծառայել է խորհրդային բանակում՝ խաղաղօվկիանոսյան



ճազմածովային նավատորմում:

Հասարակական-քաղաքական ի սկզբանե ակտիվ գործունեությունը սկսել է Սիսիանում, շարունակել Սյունիքի մարզում, ապա՝ հանրապետության ամբողջ տարածքում:

20-րդ դարավերջի եւ 21-րդ դարակազմի մեջ բաժին հասած գերիստ ժամանակաշրջանում, անկախության ճանփա ելած Հայաստանում, նա չէր կարող ստույգ հավատամք, ապրելու եւ գործելու չափված-մեծարված բանաձեւ չունենալ:

Եվ անդամագրվեց Պարույր Հայրիկյանի գլխավորած քաղաքական ուժին՝ Ազգային Ինքնորոշում Միավորմանը:

Բայց այդ ամենին զուգահեռ, այդ ամենից առաջ նա իր տեղը էր գտել մեկ այլ «փարախում»։ Ոչ հայրենի երկրամասի՝ Սյունիքի նվիրյալ գավակների առաջնապահ գումար էր, որի գինվոր էր մինչև կյանքի վերջին օրը:

Եվ քաղաքական, մարդկային, բարոյական այդ կողմնորոշումներում, այդ տեղում, այդ ճանապարհին երբեք չաղարտվեց, չաղավաղվեց, կիսատ չմնաց, որովհետեւ հայրենապաշտության արեւոտ այդ հարթավայրում ի սկզբանե ոտք էր դրել որդու եւ տիրոջ, տիրոջ ու մշակի իրավունքով եւ առաքելությամբ:

Այն քչերից մեկն էր, որ ամենադժվար ու հակասական պահերին անգամ տեր կանգնեց Սյունիքի եւ սյունեցու արժանապատվությանը:

Վերջին երկու տարում մայրաքաղաքում էր՝ լրագրողական ընտանիքում, հեղինակավոր HayNews.am կայքի պատասխանատուն էր:

Լրատվական դաշտում էլ նրա տեղը հաստատուն էր, քայլերը՝ վստահ:

Այսօրվա՝ այնքան էլ ոչ խաղաղ մեր հանգրվանում ծավալված ու շարունակվող իրականությունն իրեն այնքան էլ չէր բավարարում:

Ոչ, ընդհանադիր չէր, պարզապես իր վերածնվող հայրենիքի արժանավոր շարքայինն էր ու մարտիկը եւ ուզում էր ավելի լավ տեսնել մեր երկիրը, ավելի հաստատուն՝ մեր ընթացքը:

Ձարմանալի մարդ էր. նրա ներսի թագավորությունն անձայրածոր էր ու այնքան բազմամարդ, բազմաբեւեռ, որ քչերի մեջ կարելի է հանդիպել մարդկային հարաբերությունների մասնիրողություն:

Ու այդ թագավորության յուրաքանչյուր բնակչի տեղը գի-

տեր: Յուրաքանչյուրի հաջողությունից շառագունվում էր, անհաջողությունից՝ գունատվում, մտահոգվում, կարեկից լինելու ջանքեր գործադրում:

Նա իր ընկերներին, բարեկամներին, համերկրացիներին սիրտ ու ձեռք է պարզել անկեղծությամբ ու մաքուր եղբայրությամբ:

Միեր Եղիազարյանը բարեհամբավ գերաստանի շառավիղ էր՝ օրինակելի օջախով, հայրց ազգային բանակում հպարտորեն ծառայած Վազգեն եւ Դավիթ որդիներով, գերաստանի լավագույն ավանդույթները պատվախնդրորեն շարունակող տիկին Նորվարդով:

Նրա օջախում միշտ էլ կարելի էր սիրտ ջերմացնել: Նրա օջախում կարելի էր սյունիքյան ավանդույթներից շատերին հաղորդակից դառնալ:

Առանձնահատուկ վերաբերմունք ուներ նախնյաց հիշատակի հանդեպ. ծննդավայրում լինելիս առաջինն այցելում էր Ծաղիկ տատի գերեզմանը, ում բուրդից շատ էր սիրել, ում խորախորհուրդ պատգամները մինչև վերջ կողմնորոշիչ էին նրա համար:

Հայրորդու նրա գորավորության հորդաբուխ ակունքը, հոգեւոր սկիզբը, հենման կետը Սյունիքն էր՝ մեր սրբասուրբ Լեռնաշխարհը:

Ամենադժվարին իրավիճակներում անգամ նա անհաղորդ չէր սյունիքյան անցուղարձին, մեր Լեռնաշխարհի առօրյային:

Գրեթե ամեն օր տեսնում էինք, թե ինչպես է որդիական սիրով գուրգուրում իր փոքր հայրենիքը՝ Սյունիքը:

Միեր Եղիազարյանի ծննդավայրը Լորաձորի առաջին գյուղն է՝ Որոտանի աստվածասկիզբ կիրճի աջափնյա պնակին՝ դեռես Ստեփանոս պատմիչի մատյանում հիշատակված:

Բանաստեղծական այդ եզերքում, նաեւ հայրց մեծերից շատերի մասին հիշողություններով ու գրույցներով են մեծահարգ երամիջ Եղիազարյանը եւ տիկին Մարիետան դաստիարակել իրենց ավագ որդուն՝ ձեւավորելով իբրեւ ընթրիհանգստան արժանի քաղաքացի:

Միեր Եղիազարյանի խոսքն ու ներկայությունը սպասված էին ոչ միայն Սիսիանում:

Մտավորական էր ամբողջ էությամբ:

Չեւտոր էր ու հրապարակախոս. հասարակական-քաղաքական գործընթացներում նրա խոսքը նշանակություն ուներ:

Մինչև կյանքի վերջը հասարակական գործունեությունը նրա տարերքն էր:

Նրա կերպարի հանրային ընկալման համար, նրա բարոյական վաստակած կշռի համար սահմանասյունն այն մեղադրանքն է, որ ներկայացվել էր՝ մանավանդ որ դատարանի ուժով հաստատված չէր ենթադրյալ մեղքը:

Իր կյանքը պարագծել է այնպիսի վարքով ու լցրել այնպիսի գործերով, որ նրա գավակներն ընդմիջտ հպարտանալու են իրենց ծնողով եւ մարդկանց աչքերին մայելու են ուղիղ:

Մարդկային հարաբերություններում, մեր փոքր հայրենիքի ծառայելու գործում բազում հաղթականարներ կանգնեցրեց, որոնք ոչ միայն չեն փլվելու, այլև մնալու են երախտապարտ սյունեցիների մտքերում:

**Եվ ուրեմն՝ Միեր Եղիազարյան արժանապատիվ սյունեցու անունը կմնա սերունդների հիշողության մեջ:**

**Թող Աստված լուսավորի Միեր Եղիազարյանի հոգին եւ երկնքի կամարներից ներս ընդունի նրան:**

**Հիշատակն արդարոց օրհնությանը եղիցի:**

**Սուրբ գրքի այդ խոսքի հովանու ներքո էլ աղոթք են բարձրացնում առ Աստված՝ իմ բացառիկ ընկերոջ եւ բարեկամի հոգու խաղաղության համար:**

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

## ԵՄ-ն ՀՀ կառավարությունից ակնկալում է Միեր Եղիազարյանի մահվան դեպքի պատշաճ հետաքննություն

Եվրոպական միությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունից ակնկալում է մանրամասն եւ պատշաճ հետաքննություն՝ օրեր շարունակ հացադուլից հետո բանտում մահացած Միեր Եղիազարյանի մահվան առիթով: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ ասել է Եվրամիության արտաքին քաղաքականության հարցերով պատասխանատուի խոսնակ Մայա Կոսյանչիչը, փոխանցում է ec.europa.eu-ն: Մայա Կոսյանչիչը ընդգծել է, ընդհանրապես խոսելով պետք է ընդգծել, որ բոլորին է հայտնի, որ ԵՄ-ն դեմ է եւ պայքարում է խոշտանգումների դեմ: «Այս համատեքստում մենք ակնկալում ենք Միեր Եղիազարյանի մահվան պատշաճ հետաքննություն: Մենք սպասում ենք Հայաստանից գործողություններ, եւ այդ, մենք տեղյակ ենք այս դեպքի մասին»:

## Միեր Եղիազարյանի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔԲ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի վարույթում քննություն է տարվում՝ պարզելու ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿԳ-ում պահվող կալանավոր Միեր Եղիազարյանի մահվան հանգամանքները: 2019թ. հունվարի 26-ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում է ստացվել առ այն, որ նույն օրը՝ ժամը 06:30-ին, քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնար հիվանդասենյակում հանկարծամահ է եղել 2018թ. դեկտեմբերի 5-ից մինչև 2019թ. հունվարի 17-ն ընկած ժամանակահատվածում հացադուլ իրականացրած եւ վերականգնողական փուլ անցնող կալանավոր Միեր Եղիազարյանը: Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերում առկա են քրեական գործ հարուցելու առիթ եւ բավարար հիմքեր՝ ՀՀ ՔԿ ԵՔԲ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով (Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ): Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական եւ դատավարական այլ գործողություններ՝ կալանավորի մահվան հանգամանքները պարզելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

# Հունան Պողոսյան. «Անելու ենք ամեն ինչ, որ մարզպետարանի մասին հանրության կարծիքը լինի դրական»

էջ 1 Ձեր նախկին աշխատանքով, երբ հանրապետության ոստիկանապետի առաջին տեղակալ էիք:

Սյունիքում, քիչ բացառությամբ, Ձեր նշանակումն ընդունվեց հանդարտ եւ, իհարկե, սպասումներով, հույսերով:

Հուզական այդ մթնոլորտը, կարելի է ասել, նահանջել է, եւ մարդիկ հիմնականում համոզվել են, որ հետեղափոխական կառավարության կադրային այդ լուծումը ողջամիտ էր:

Այդ ամենին Դուք համոզարտ եւ սառնասիրտ եք վերաբերվել, որը գնահատելի է:

Համաձայն եք մեր դիտարկումներին եւ գնահատականներին, կարող ենք փաստել, որ տարակույսները մնացել են անցյալում, որ մարզպետ-հանրություն հարաբերություններում առկա է փոխհասկացողության, փոխվստահության մթնոլորտ:

- Ընդհանուր առմամբ՝ այո՛, համամիտ եմ իմ նշանակումից հետո ստեղծված մթնոլորտին տված գնահատականների հետ, իսկ այս պահին հարաբերություններս թե՛ հանրության տարբեր հատվածների հետ, թե՛ մեր աշխատանքին առնչվող բնագավառներում նորմալ են՝ կառուցողական եւ վստահության մթնոլորտում:

- Կարգապետը քանիցս անդրադարձավ Ձեր նշանակման մոտիվներին եւ մասնավորապես ասաց. «...Կարծում եմ՝ սոցիալական հանդուրժողականության ռազմավարության համատեքստում դա ճիշտ որոշում է»:

Բայց վարչապետն այդ օրերին գնահատականներ տվեց նաեւ սյունիքյան իրականությանը, ինչը, հավանաբար հիշում եք, ոչ միանշանակ արձագանքի արժանացավ:

Հարյուր օրվա հեռավորությունից, երբ արդեն հասցրել եք ներսից ծանոթանալ Սյունիքին, համաձայն եք մարզի վերաբերյալ վարչապետի գնահատողական դատողություններին, թե՛ դա երկրի ղեկավարին հաղորդած ոչ հավաստի ու ոչ ամբողջական տեղեկատվության արդյունք էր:

- Պատշաճ չեմ համարում մեկնաբանել երկրի վարչապետի գնահատականները եւ խոսքերը...

- Իսկ Դուք ինչպե՞ս եք գնահատում մարզի հասարակական-քաղաքական, բարոյահոգեբանական եւ, իհարկե, օպերատիվ իրավիճակը:

- Մարզում հասարակական-քաղաքական, բարոյահոգեբանական բնականորեն իրավիճակ է: Որպես մարզպետ, իհարկե, տեղյակ եմ նաեւ օպերատիվ իրավիճակին, եւ այն վերահսկելի է, բայց վերջինիս գնահատականն առավել ճիշտ ու մանրամասն կարող են տալ իրավապահ մարմինները:

- Եվ, այդուհանդերձ, որո՞նք են, ըստ Ձեզ, Սյունիքի մարզի հիմնախնդիրները:

- Կարծում եմ՝ գլոբալ առումով մարզի հիմնախնդիրներից կարեւորագույնն այստեղ տնտեսության միաբեռն զարգացումն է՝ իր երկարաժամկետ եւ տարբեր ոլորտներում ունեցած հետեւանքներով: Իսկ առհասարակ, մարզում առկա են բոլոր այն հիմնախնդիրները, որոնք կան ողջ հանրապետությունում՝ աշխատատեղերի պակաս, քաղաքաշինական հարցեր, ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ, բնակարանաշինություն, դպրոցաշինություն եւ այլն... Գրեթե բոլոր ոլորտներում էլ բազմաթիվ խնդիրներ կան:

- Ձեր աշխատանքային կենսագրությունը, կարելի է ասել, հիմնականում հյուսվել է ոստիկանական համակարգում: Եվ հանկարծ՝ տարածքային կառավարման ինստիտուտ՝ մարզպետարան: Չենք կարծում, որ դյուրին պետք է լինե՞ր անցումը, նոր համակարգի հետ ինտեգրումը, բայց եւ...:

- Ասել, թե անցումը միանգամից է կատարվում, ճիշտ չէ: Կարծում եմ՝ անցումային ժամանակահատված պետք է լինի, բայց նաեւ համարում եմ, որ արդեն անցել են այդ հատվածը, փորձել են, որ դա ինձ մոտ հնարավոր



րինս կարճ տեւի, ու այն արդեն ավարտվել է:

- Ու եթե փորձենք ընդհանրացնել հարյուր օրվա արդյունքները՝ ի՞նչ մատնացույց կանեք հատկապես:

- Մարզում անցկացված ընտրությունների անմախաղեպ ընթացքը, համայնքների ղեկավարների հետ կառուցողական հարաբերությունների ձեւավորումը, մարզում կիսատ մնացած ծրագրերի բնականորեն շարունակականությանն ապահովումը, նաեւ Սյունիքում առկա, հրատապ լուծում պահանջող խնդիրների, այսպես ասած, գույքագրումը եւ ըստ առաջնահերթության դրանց լուծման ժամանակացույցի կազմումը:

- Ձեր առաջին փորձությունը կամ քննությունը, եթե կարելի է այդպես ասել, Կապան համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունն էր: Ոմանք այն կարծիքին են, թե 2018թ. հոկտեմբերի 21-ին գործող իշխանությունը կամ, ինչպես ընդունված է ասել, հեղափոխական թիւը պարտվեց Կապանում: Ոմանք էլ պնդում են, թե դա կապանցիների հաղթանակն էր, երկրում նորոնոր ձեւավորված մթնոլորտի պտուղը, քանի որ արդար եւ օրինական ընտրություն էր տեղի ունեցել:

Ձեր հետադարձ հայացքն այդ իրադարձությանը, թե՛ն ընտրության ժամանակ չորս-հինգ օրվա մարզպետ էիք դեռեւս:

- Կարծում եմ՝ իրականում ոչ հաղթանակ էր դա, ոչ պարտություն, բայց եթե դիտարկում ենք այդ հարթությունում լուրջ մրցակցային ընտրություն էր՝ ձայների քիչ տարբերությամբ, եւ «պարտություն» ձեւակերպումն իրականում հարթանակ էր...:

- Կուզե՞նայինք անդրադառնալ նաեւ 2018թ. դեկտեմբերի 9-ի Աժ արտահերթ ընտրությանը:

Ճիշտ է, մարզպետն ուղղակիորեն պատասխանատու չէ համապետական այդ միջոցառման կազմակերպման համար, բայց եւ կառավարության ներկայացուցիչն է տեղում, ուստի եւ պատասխանատու է իրավիճակի համար:

- Ինչպես նշեցի, դա անմախաղեպ թափանցիկ, առանց լուրջ միջադեպերի եւ խախտումների անցկացված ընտրություն էր, ու ժողովուրդն ազատ կամահայտնության հնարավորություն ունեցավ, որն էլ արտացոլվեց քվեարկության արդյունքում:

- Դեռեւս որեւէ բացատրություն չի տրվել այն կապակցությամբ, որ Կապանի տարածաշրջանից թեկնածու չի անցել խորհրդարան, թե՛ն տարածաշրջանն ամենաշատ քվեներ էր տվել «Իմ քայլը» դաշինքին (համեմատած մարզի մյուս տարածաշրջաններին):

Դուք ունե՞ք դրա բացատրությունը:

- Նախ՝ համաձայն չեմ, թե որեւէ բացատրություն չի տրվել այդ հարցին. ինքը՝ Նարեկ Բաբայանը հայտարարել է, որ վայր է դրել Աժ

պատգամավորի մանդատը, որպեսզի մնա Սյունիքում, աշխատանքը շարունակի այստեղ, ուժերի ներածին չափով աջակցի, որ երկրում կատարվող դրական փոփոխություններից մարզն անմասն չմնա՝ համուն բարեկեցիկ եւ հզոր Սյունիքի...:

Նաեւ հիշե՛ք, ընտրությունն ըստ տարածաշրջանների չէր կատարվում, կա մեկ ընտրատարածք, որ միավորում է Սյունիքի եւ Կայոց ծորի մարզերը, ու այն բավականաչափ պատգամավորներով ներկայացված է Աժ-ում, իսկ նրանք երկու մարզի բնակիչների ներկայացուցիչներն են հավասարապես:

- Ի՞նչը Ձեզ չհաջողվեց անցած հարյուր օրում կամ ի՞նչը հիասթափեցրեց, չէ՞ որ հայտնվեցիք (ինչպես արդեն նշել ենք) նոր համակարգում, նոր մարզում, նոր թիմի հետ:

- Իհարկե, դեռ շատ բան չի հաջողվել, իսկ հիասթափեցնող բաներ չեն եղել, այդ մասին նույնիսկ չեմ մտածել:

- Ի՞նչ ժառանգություն էր Ձեզ բաժին հասել մարզում եւ հատկապես մարզպետարանում՝ նախորդ ժամանակներից, նախորդ կառավարիչներից:

Անկեղծ լինե՛ք՝ մարզպետարանի, մարզպետարանի աշխատակազմի հանդեպ հանրային կարծիքը (նախորդ ժամանակից) միանշանակ չէ ու հաճախ՝ ոչ դրական:

- Ամեն մի ժամանակաշրջանում եւ բոլոր ղեկավարների օրոք մարզպետարանում եղել է նորմալ աշխատակազմ, եւ միշտ եղել են մարդիկ, ովքեր պարկեշտորեն կատարել են իրենց պարտականությունները, որեւէ մեկին վատաբանել չեմ ցանկանում, մենք սկսում ենք նոր էջից:

Ու նաեւ բնական է, որ աշխատող ամեն մի կառույցում կան ե՛ւ գոհ, ե՛ւ դժգոհ մարդիկ:

Ինչե՛լ, անելու ենք ամեն ինչ, որ մարզպետարանի աշխատակազմի մասին այսուհետ հանրության կարծիքը լինի միանշանակ՝ դրական:

- Կառավարության օպտիմալացումը, կարելի է ասել, իրողություն է դառնում: Որքանով տեղյակ ենք՝ օրակարգում է նաեւ մարզպետարանների օպտիմալացումը:

Նախ՝ հավաստի՞ է արդյոք այդ տեղեկատվությունը: Այնուհետեւ՝ ինչպիսի՞ կառուցվածք եւ որքա՞ն աշխատակից է ունենալու նորացված մարզպետարանը:

- Այո՛, տեղեկությունը հավաստի է, մարզպետարանի օպտիմալացումն օրակարգում է, դրա վերաբերյալ դեռեւս քննարկումներ են ընթանում, այնպես որ՝ վերջնական կառուցվածքը եւ աշխատակազմի քանակը պարզ չեն: Գործընթացի ավարտից հետո այդ տվյալները կիրառարկվեն:

- Ըստ բազմաթիվ սյունեցիների՝ Դուք

հասցրել եք թողնել լավ կազմակերպչի, իրավիճակին տիրապետող, բարձր կուլտուրայի տեր եւ անկեղծ ու կամեցող ղեկավարի տպավորություն, ասել է թե՛ կարճ ժամանակամիջոցում դարձել եք մեզանից մեկը:

Դուք հասցրել եք մարզպետարանը համեմատականությունների, ինքնիրավչության լաբորիմթոսից, բայց...:

Գաղտնիք չէ, որ 2016-18 թվականներին Սյունիքը ենթարկվել է փորձությունների, ներքաշվել ամենատարբեր արկածային պատմությունների մեջ:

Եվ որոշ հարցեր, խոստովանենք, վաղեմության ժամկետ չունեն ու պատասխանի կարոտ են:

Տեւական ժամանակ հակասական ու մտահոգիչ խոսակցություններ են շրջանառվում Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի ֆինանսական գործարքների շուրջ, որի հիմնադիրը ՀՀ կառավարությունն է, իսկ հոգաբարձուների խորհրդի նախագահը՝ Սյունիքի մարզպետը:

Արդյո՞ք հասցրել եք պարզել հիմնադրամի հետ կապված խոսակցությունների հավաստիությունը, ինչպե՞ս են գործերն այնտեղ վերջին մարզպետափոխությունից հետո, ի՞նչ խնդիրներով է ներկայումս զբաղված հիմնադրամը:

- Նախ, շնորհակալ եմ, եթե իրոք այդպիսի կարծիք է ձեւավորվել իմ մասին:

Տեղեկացնեմ, որ հիմնադրամն այս պահին գործում է, մեկ անգամ հոգաբարձուների խորհրդի միտ է եղել, որի ընթացքում հստակեցվել են առաջիկա անելիքները: Ներկայումս հիմնադրամը ոչ մեծ ծավալով՝ հիմնականում սոցիալական, մշակութային, առողջապահական ուղղվածությամբ գործունեություններ է իրականացնում, հետագայի մասին դեռ քննարկումներ կլինեն:

- Ի դեպ, Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի՝ երկու տարի շարունակ թմբկահարվող գործերից մեկը Կապանի օդակայանի վերակառուցման ու վերագործարկման ուղղությամբ տարվող աշխատանքներն են: Անտարակույս, Սյունիքում գործող օդակայան ունենալն անհրաժեշտություն է:

Բայց, արդյո՞ք մարզն այն վիճակում է, որ այդքան միջոց այս պահին պետք է ուղղվի օդակայանի վերագործարկմանը, մասնավոր՝ որ հենց Կապանի տարածաշրջանում ունենե՞ք օրափոփոխ ու կենսական նշանակության բազմաթիվ հոգսեր՝ շատ վաղուց լուծման կարոտ:

Ձեր դիրքորոշումը:

- Կապանի օդանավակայանի վերագործարկումը ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության ծրագրերից է, եւ կարելու նշանակություն ունի մարզի տրանսպորտային ենթակառուցվածքների դիվերսիֆիկացիայի առումով:

- Մենք խոսում ենք նախորդ շրջանից փոխանցված ժառանգության մասին...:

2018-ի հունիսի 8-ից հետո, երբ այդ օրերի մարզպետն ազատվեց աշխատանքից, նրա թողած հետքերը ոչ ոք չփորձեց վերացնել:

Մարզի միակ դոկտոր-պրոֆեսոր Լեւոնիկ Պետրոսյանին աշխատանք չենք տալիս:

Սմբատ Օրբելյան, Սլավիկ Ամիրյան, Արտյոմ Թադեւոսյան, Սվետա Իսախանյան, Անուշ Օրբելյան եւ բազմաթիվ ուրիշ բժիշկներ...Նրանք՝ մեր լավագույնները, հեռացվեցին մարզից, որոնց փոխարեն մայրաքաղաքից բերվեցին անհայտ կենսագրությամբ բժիշկներ:

Ուրեմն Չաքարյան, Լեւոն Մարգարյան, Լիլիթ Առաքելյան... Հանրակրթության ոլորտի այդ երեւելիները նույնպես դուրս մղվեցին, ու մինչեւ այսօր դատական քաշքշուկների մեջ են:

Հիմա էլ ասում են՝ մարզպետարանի ներսից ինչ-որ խումբ խոչընդոտում է,

**որ այդ մարդկանց ոտնահարված իրավունքները վերականգնվեն:**

- Չեր թվարկած մարդկանցից մի քանիսի հետ հանդիպել եւ գրուցել եմ, խնդիրներին ծանոթ եմ, բայց նշված անձանցից մի քանիսի շուրջ դատական գործընթացներ են տեղի ունենում, պետք է սպասել: Հավաստիացնում եմ, խոչընդոտելու երեւոյթ չկա, իսկ դատական գործընթացներին մենք չենք կարող միջամտել:

- Ըստ մամուլի հաղորդումների՝ Կապանի լեռնահանքային կոմբինատում տեղի է ունենում սեփականատիրոջ փոփոխություն: Ինչո՞վ է պայմանավորված այդ փոփոխությունը: Հասցրե՞լ եք հանդիպել նոր սեփականատերերի հետ, եւ ի՞նչ ծրագրերով եւ գալիս Կապան:

- Տեղյակ եմ, որ փոփոխություն է եղել այնտեղ, իսկ թե ինչով է պայմանավորված՝ չեմ կարող ասել, նոր սեփականատերերին առայժմ չեմ հանդիպել:

- Արդեն մեկ ամիս է՝ թեւակոխել ենք 2019 թվական: ՀՀ պետական բյուջեով ի՞նչ ծրագրեր են նախատեսված այս տարի Սյունիքի մարզում:

- Սյունիքի մարզում 2019 թվականին նախատեսված ծրագրերն ամփոփ տեսքով՝ մարզի 2019 թվականի գործունեության ծրագրով կներկայացնենք ու կիրառարկենք մարզպետարանի պաշտոնական կայքում, որին կարող են ծանոթանալ բոլորը:

- Դեռեւս 2018թ. հուլիսի 5-ին ՀՀ վարչապետը, երբ գտնվում էր Կապանում, հավաստիացրեց, որ շուտով Կապանի ֆուտբոլի թիմը (մարզից հանիրավի օտարված) կվերադարձվի Կապան: Կա՞ տեղաշարժ այդ հարցի լուծման ճանապարհին:

- Այդ խնդիրը դեռ քննարկումների փուլում է, մարզադաշտի սեփականատիրոջ հետ բանակցություններ են ընթանում, եւ արդյունքի հասնելը ձգձգվում է՝ պայմանավորված նրա դիրքորոշմամբ:

- Հասցրե՞լ եք ծանոթանալ մարզի լեռնային ու սահմանամերձ գյուղերին, ինչպե՞ս եք գնահատում համայնքների խոշորացման ծրագրերի արդյունքները Սյունիքում:

- Իհարկե, ծանոթացել եմ, բոլոր համայնքներում եղել եմ, բայց դեռեւս չեմ հասցրել լինել ամեն մի բնակավայրում: Խոշորացման ընթացքից նախնական տպավորությունս դրական է, սակայն, կարծում եմ՝ երկու տարին դեռ կարճ ժամանակահատված է՝ արդյունքներն ամփոփելու եւ գնահատական տալու համար:

- Ի՞նչ եք կարծում՝ հարյուր օրվա կտրվածքով՝ համայնքների ղեկավարները կարողացե՞ն ինչ-որ բան արել իրենց առջեւ դրված պարտադիր խնդիրները, պատրաստ են Ձեզ հետ համատեղ ճանապարհ անցնել՝ հանուն մեր երկրի ու պետականության:

- Մարզի համայնքների ղեկավարները մեծ հաշվով կատարել են իրենց առջեւ դրված պարտականությունները՝ օրենքի սահմանած շրջանակներում: Համուն մեր երկրի ու պետականության բոլորս ենք պարտավոր միասին ճանապարհ անցնել, իսկ թերացողները, բնականաբար, ինչ-որ ժամանակ հետո կլքեն այդ ճանապարհը:

- 2017թ. դեկտեմբերին բացվեց Մեղրու ազատ տնտեսական գոտին: Բացման արարողությունից թույլտվություն անց նորաբաց կառույցը փակվեց...

Մինչդեռ՝ պետական մակարդակով շարունակեցինք թմբկահարել, որ ազատ տնտեսական գոտի ունենք, ներդրողները գալիս են եւ այլն:



**Անգամ համաշխարհային հռչակ ունեցող Դավոսի հարթակից մեր հանրապետության ներկայացուցիչը երկրներին կոչ արեց օգտվել Մեղրու ազատ տնտեսական գոտու հնարավորություններից: Ի՞նչ կա չկա Մեղրու ազատ տնտեսական գոտուն:**

- Մեղրու ազատ տնտեսական գոտին ստեղծվել է ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 07.12.2015թ. N 1595-Ս որոշմամբ, գոտու կազմակերպիչ է ճանաչվել պետության կողմից ստեղծված «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն: Ազատ տնտեսական գոտին (ԱՏԳ) նախատեսված է կառուցապատել երկու փուլով:

Առաջին փուլով ստեղծվել են նվազագույն անհրաժեշտ ենթակառուցվածքներ եւ նախապայմաններ՝ ԱՏԳ աշխատանքները մեկնարկելու եւ ԱՏԳ-ում գործունեություն ծավալելու հետաքրքրություն ունեցող ընկերությունների հետ տեղում գործունեությունը կազմակերպելու համար:

Երկրորդ փուլով նախատեսվում է ԱՏԳ գործունեության, ենթակառուցվածքների, տարածքի հավելյալ 70 հեկտարով ընդլայնում՝ ստեղծելով նախապայմաններ շահութաբեր բիզնես ծավալելու համար: Վերոնշյալ տարածքներից շուրջ 50 հեկտարը կտրամադրվի

շահագործողների գործունեության, 10 հեկտարը՝ լոգիստիկ-պահեստային տարածքների, մնացած տարածքները՝ գրասենյակային եւ այլ ծառայությունների համար:

2018 թվականին մեկ ընկերություն ՀՀ կառավարության որոշմամբ ստացել է ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն՝ յոթ տարի ժամկետով՝ մշակող արդյունաբերության (սննդամթերքի արտադրության), առևտրի, լոգիստիկ (սառնարանային եւ պահեստային տնտեսության) ոլորտներում գործունեություն ծավալելու նպատակով:

- Այս հարցազրույցը համընկել է 2018-ի արդյունքների ամփոփմանը: Ուստի եւ կուզենայինք ձևակերպել մի քանի ցուցանիշ ավարտված տարվա արդյունքների առնչվող:

Այսպես՝ որքա՞ն ներդրում կատարվեց Սյունիքում 2018-ին (ոչ բյուջետային ներդրումների մասին է խոսքը): 2018-ի սկզբին լուրջ խոստումներ էին տվել սյունեցիներին:

Եվ, եթե կարելի է, ո՞ր ոլորտներում եւ ո՞վ է կատարել ներդրում:

- Մարզում կատարված ներդրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը համարվում է համար հասանելի կլինի մարզի գոր-

ծունեության 2018 թվականի ծրագրի ամփոփումից հետո: Նախնական տվյալներով տեղական եւ միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների եւ բարեգործական կազմակերպությունների միջոցով իրականացվել են շուրջ 49.1 մլրդ դրամի զարգացման, ներդրումային եւ վարկային ծրագրեր մարզի տնտեսության բոլոր ոլորտներում:

- 2018-ի արդյունքներին առնչվող մեկ հարց եւս. որքա՞ն աշնանացան է կատարվել անցած տարվա վերջին, ի՞նչ ավարտ ունեցավ աշնանացան ցորենի սերմացուների հետ կապված պարտքի պատմությունը:

- 2018թ. վերջին մարզում կատարվել է 9500 հա աշնանացան: Ցորենի սերմացուի պարտքի հետ կապված հարցը դեռեւս դատական գործընթացների մեջ է, չի հանգուցալուծվել, քննչական մարմիններն են զբաղվում դրանով:

- Սոցիալական վիճակին առնչվող հարց. 2018-ի արդյունքներով որքա՞ն աշխատատեղ է հիմնվել Սյունիքում:

- Վերջնական պատկերը կրկին պարզ կլինի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրի մոնիթորինգի արդյունքում: Նախնական տվյալներով 2018 թվականի ընթացքում մարզում ստեղծվել է շուրջ 900 աշխատատեղ:

- Դուք մասնակցել եք Արցախյան հերոսամարտին, նաեւ, որքանով տեղյակ ենք, վիրավորվել եք ու առաջին բժշկական օգնությունը ստացել Գորիսի հիվանդանոցում: Ի՞նչ հարաբերությունների մեջ եք ազատամարտի սյունեցի վետերանների, ասել է թե՛ ԵՎՍ-ականների հետ:

- Նրանց մի մասին ճանաչում եմ, մի մասի հետ առավել սերտ հարաբերություններ ունեմ, մյուսներին դեռ չեմ հասցրել հանդիպել, բայց բոլորն էլ, միանշանակ, լինելու են մեր ուշադրության կենտրոնում:

- Ձեզ հաջողվո՞ւմ է հասանելի լինել մարզի բնակիչներին: Ինչպե՞ս եք կազմակերպում հանրության հետ կապը:

- Չգտում եմ առավելագույնս հասանելի լինել մարզի բնակչությանը: Դրա համար կիրառվում են բոլոր հնարավոր միջոցները. դրանք են ինձ նստ եկող քաղաքացիների ամենօրյա մեծ հոսքը, հատուկ կազմակերպվող ընդունելության օրերը, որն արդեն մարզկենտրոնից գատ սկսել ենք կազմակերպել նաեւ այլ համայնքներում:

Գրեթե ամեն շաբաթվա մեջ ունենում եմ այցեր բնակավայրեր, տարբեր կառույցներ, կոլեկտիվներ, ու ամեն տեղ մարդիկ ներկայացնում են հարցեր, առաջարկներ, բողոքներ եւ այլն: Քաղաքացիները նաեւ զանգահարում են, դիմում են համացանցի միջոցով, նաեւ ինքներս հետեւում ենք վիրտուալ տիրույթում մարդկանց մեկնաբանություններին, բարձրացրած խնդիրներին եւ արձագանքում: Ինչպես նաեւ հանգստյան օրերին սիրում եմ զբոսնել, ու մարզկենտրոնի փողոցներում պարզապես քայլելիս եւս ճանաչողները մոտենում ու զրուցում են:

- Պարոն Պողոսյան, Ձեզ՝ բարի եւ նպատակալաց, հուսախաբ չանող, սյունեցիների սպասելիքներն արդարացնող աշխատանք:

- Ես նույնպես շնորհակալ եմ հարցազրույցի եւ իմ պաշտոնավարման հարյուր օրվա աշխատանքի ամփոփումը «Սյունյաց երկրի» միջոցով հանրությանը ներկայացնելու հնարավորության համար:

**Հարցազրույցը՝ Սամվել Ալեքսանյանի եւ Սուսաննա Բաբաջանյանի**

# Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանին. բաց նամակ

Մենք գրում ենք Ձեզ, որովհետեւ այլեւս հնարավոր չէ ոչ համբերել, ոչ էլ դիմանալ: Միսիանի թիվ 4-րդ դպրոցի 480 երեխայի ծնողներ ենք: Բանն այն է, որ մեր երեխաները ֆիզկուլտուրա չեն պարապում, որովհետեւ դահլիճի հատակը փտել է, գույք չկա, չկա նաեւ խաղահրապարակ: Ամեն տարի (արդեն 10 տարի) դաստիարակները եւ տնօրենն ասում են, որ ամռանը դահլիճը կնորոգվի, բայց սայլը տեղից չի շարժվում: Այս ամռանն ուրախացանք, որ շենքի հետեւի հսկա ուռիները կտրեցինք, այսինքն՝ լավ է, դպրոցի արհեստանոցում տախտակ ենք քաշելու, դահլիճի հատակը կփոխենք: Բայց դա չար-

վեց, չգիտենք՝ ինչու: Էլի երեխաները մնացին դրսում: Նրանք շաբաթական երեք դասաժամ ֆիզկուլտուրա ունեն՝ այդ կարեւոր առարկան: Այդ ժամերին նրանք իրենց դասարանում չեն մնում, որովհետեւ այնտեղ ուրիշ դասարան է դաս անում, միջանցքում չեն թողնում մնան, որովհետեւ աղմկում են, հետո գալիս են 2-րդ հերթի երեխաները, եւ նրանք դուրս են հանում դպրոցից: Պայուսակները շալակած կամ գրկած՝ նրանք խմբվում են բակում կամ շենքի հետեւում՝ մինչեւ զանգը հնչի: Անձրեւին, քամուն, տապին, ցրտին, ձմռանն էլ ծյունի տակ՝ մրսում են, հաճախ էլ՝ հիվանդանում: Ֆիզկուլտուրայի դասա-

տուներն էլ մարդ են՝ մրսում են, նրանք էլ շենքի ներսից նայում են, որ երեխաները չվնասվեն: Այսպես՝ տարիներ շարունակ: Խնդրում ենք՝ մեր նամակն անստորագիր չհամարեք, քանզի այն բոլոր ծնողների սրտից է բխում, նաեւ՝ տատիկների ու պապիկների: Օգնեք մեր երեխաներին, նրանք սիրում են իրենց դպրոցն ու ուսուցիչներին: Չեն ուզում՝ ուրիշ դպրոց հաճախել:

**Նախապես շնորհակալություն ենք հայտնում: Միսիանի 4-րդ դպրոցի ծնողներ**

# Պաշտոնանկ է արվել Քաջարանի կոմբինատը ստուգող տեսչական մարմնի ղեկավարը. ինչո՞ւ

էջ 1 **Դուք բարձրակարգ եք, ուզում եմ ավելի լավին բերել:**

Այստեղ մի քանի ակնարկ կա, միայն դա չէ, հետո ակնարկ չէ, բայց տեքստով էլ նշված է, եթե մասնագիտական տեսանկյունից նայենք, պետական կառավարումը միանգամայն տարբերվում է այլ մասնագիտական գործունեությունից, կարող է՝ դու մեծ ծավալի ինֆորմացիա ունենաս բնապահպանական կամ այլ գործունեության վերաբերյալ, բայց եթե չունես աշխատանքային փորձ, չի ստացվի, մեքենա վարելու պես բան է կառավարության համակարգը, պետք է կառավարման համակարգում գտնվես, որ ընթացքում կարողանաս հասկանալ, թե ինչպես է այդ մեխանիզմն աշխատում: Եվ այս տրամաբանությամբ եթե դիտարկենք, Հանրապետական կուսակցությունից առավել լավ կառավարիչներ չկան, որովհետև ամենամեծ փորձն իրենք ունեն, բայց դա չէ գնահատման չափանիշը: Որեւէ ոլորտում չի կարող լինել որեւէ անձ, որ հնարավոր չլինի փոխարինել ավելի հետաքրքիր, ավելի բարձրակարգ մասնագետներով:

Բայց խնդիրն այս ամենի մեջ չէ: Ընդ որում՝ բավականին կոռեկտ ձեւակերպումներ են տրված աշխատանքից ազատման հիմնավորումը ներկայացնելիս, ինչը գնահատելի է: Մի քանի խնդիրների մասին պիտի հստակ ներկայացնեն, որից հետո պարզ կլինի: Այստեղ կա հստակ ձեւակերպում, որ կառավարության արդյունավետ գործունեության կազմակերպումը միտված է առաջադրված նպատակների իրականացմանը:

Արդ, հիմա ինչն է խնդիրը: Կա ձեւավորված գործող իշխանություն, որ լեգիտիմ է եւ Ազգային ժողովում, եւ կառավարությունում, եւ դրանց ձեւավորման գործընթացը կարծես ավարտվել է կամ ավարտին է հասցվում: Այս փուլում կառավարությունը պիտի ներկայացնի իր քաղաքականությունն այս կամ այն ոլորտում, այդ թվում՝ բնապահպանության, այդ թվում՝ բնապահպանական կամ տնտեսական հարցերի վերաբերյալ խնդրահարույց կետերի շուրջ: Երբ նշվում է կառավարության կողմից բարձրացված առաջադրանքների արդյունավետ կատարման մասին, հարցն այն է, որ կառավարության կազմի սուբյեկտները պատրաստ են արդյոք կամ գտնու՞մ են արդյոք հնարավոր իրենց ներգրավմամբ այս կամ այն հարցը կարգավորելը: Եթե ավելի հստակ ներկայացնեն՝ կան սկզբունքային տարածայնություններ առանձին հարցերի վերաբերյալ, որոնց շուրջ պիտի խոսել: Այսինքն՝ երբ բնապահպանական տեսչության ղեկավարին աշխատանքից ազատում են այս փուլում, նշանակում է հենց այս փուլում դու պետք է այդ մասին խոսես: Եվ շատ ավելի ազնիվ կլինի, որ դու մատնանշես քաղաքական նպատակահարմարության հարցը եւ ոչ թե ինչ-որ մասնագիտական ձեւակերպումներ տաս:

Ինչ վերաբերում է մեթոդին՝ մոտ մեկ շաբաթ առաջ տեսչական մարմնի համակարգման գրասենյակի ղեկավարին ինձ փոխանցեց փոխվարչապետ Տիգրան Ավինյանի առաջարկությունը՝ աշխատանքից ազատվելու վերաբերյալ դիմում ներկայացնել:

**Այսինքն Ձեզ ասել են դիմում գրել եւ հեռանալ:**

Ես ասացի, ամենայն հարգանքով եմ վերաբերվում վարչապետի շրջապատին, որ իմ անմիջական վերադասը վարչապետն է, եւ եթե կա որեւէ խնդիր, ապա վարչապետը պետք է դա ինձ ասի եւ վարչապետը կարող է միայն այդպիսի պահանջ կամ առաջարկություն ներկայացնել: Բնապահպանական տեսչությունը պետական շատ կարեւոր գործառնայի իրականացնող մարմին է, 2018թ. հունիսից սկսած հանդիսանում է կառավարության ենթակա կառույց, եւ մարմնի ղեկավարն անմիջապես ենթակա է վարչապետին, եւ չկա որեւէ այլ միջանկյալ օղակ, որին իրավական տեսանկյունից ենթակա է տեսչության ղեկավարը:

**Կարո՞ղ ենք ասել, որ Դուք ինչ-որ տեղ վերահսկում եք բնապահպանական հար-**



**ցերը:**

Ոչ թե ինչ-որ տեղ, այլ ուղղակիորեն, այդ թվում նաեւ նույն բնապահպանության նախարարության առանձին գործառնային, մասնաճյուղերի գործունեությունն ենք ստուգում՝ պարզելու համար, թե մարդիկ որքանով են պատշաճ կերպով իրականացնում իրենց հսկողական գործառնայինները: Շատերը չեն տարբերում հսկողությունը վերահսկողությունից՝ կարծելով, թե մենք պիտի գնանք անտառը հսկենք, որ այն չհատեն, բայց ռեսուրսներն այնպես են բաշխված, որ տեսչական մարմնին տրված է այնքան ռեսուրս, որ վերահսկողություն իրականացնի հսկողի նկատմամբ: Կա կառույց, որ մշտական հսկողություն է իրականացնում նույն այդ անտառի նկատմամբ, Սեւանա լճի նկատմամբ («Սեւան» ազգային պարկը 220 աշխատակից ունի), իսկ մեր ամբողջ տեսչությունը՝ Հայաստանով մեկ՝ 195 եւ Գեղարքունիքի տեսչությունը 9 տեսուչ ունի ընդամենը: Պարզ է, որ ընդամենը պիտի վերահսկենք հսկողի գործառնայինները: Եվ այս առումով բնապահպանության նախարարության առանձին ստորաբաժանումների մենք ուղղակիորեն վերահսկում ենք:

Այս կառույցը շատ հզոր կառույց է եւ շատ պատասխանատու ու կարեւոր գործառնային է իրականացնում: Եվ երբ կառույցի ղեկավարին ազատում են աշխատանքից, առաջարկում ազատվելու դիմում ներկայացնել, պետք է շատ հստակ պատճառաբանություններ լինեն եւ շատ հստակ քննարկվեն, թե ինչպես պիտի շարունակի կիսատ մնացած ստուգումների գործընթացը: **Ի վերջո, մենք Քաջարանում ստուգում ենք իրականացում, եթե դուք պատկերացնում եք՝ ինչ ասել է Քաջարանի հանքավայր. դա Հայաստանի հանքարդյունաբերության շուրջ 90 տոկոսն է, Քաջարանի կոմբինատն ամենամեծ տնտեսավարող սուբյեկտը եւ ամենախոշոր հարկատուն է: Մենք 4,5 ամիս այնտեղ ստուգումներ ենք անցկացնում, ավարտել ենք ղեկները 21-ին, որից հետո ունենք աշխատանքային 10-օրյա ամփոփման փուլ՝ այդ հսկայածավալ ինֆորմացիան ամփոփելու եւ իրավական գնահատական տալու համար: Այս փուլում գլխատել տեսչական մարմնին որքանո՞վ է պրոֆեսիոնալիզմի չափանիշներին համապատասխանում, դա այլ հարց է: Բայց այդ մասին չեմ ուզում խոսել, ամեն ղեպքում մեխանիզմը եղել է այդպես:**

Ասել եմ՝ երբ իմ անմիջական ղեկավարը պահանջի իմ հրաժարականը, խնդիր չունեն, բայց իմ անմիջական վերադասը պիտի ասի, եւ երբ վարչապետը Հայաստանում չէ, չի կարող ակնկալել, որ այդպիսի որոշում կիրառվի: Մենք աշխատանքային խորհրդակցություն էինք անցկացնում, երբ իմ օգնականը զանգեց եւ ասաց, որ կառավարության կայ-



քում այդպիսի բան է գրված:

**Դուք նշեցիք Հայաստանի հանքարդյունաբերության հսկայի մասին, որտեղ ստուգույցն այլ ուղղությամբ տանել, խոսքը Անուշահյանի մասին է: Հայաստանի կառավարությունը սկսել է գործունեությունն Անուշահյանի ուղղությամբ, եւ գուցե Դուք խանգարո՞ւմ եք: Ի՞նչ կասեք այդ առիթով, մանավանդ որ այնտեղ էլ էիք ստուգումներ անցկացնում:**

Այո, մենք ստուգում ենք իրականացրել դրա արդյունքում վեր հանած խնդիրների առնչությամբ՝ որոշումներ:

**Կարո՞ղ եք ասել, շատ հակիրճ, թե դրանք ինչ որոշումներ են:**

Որոշում է ընդունվել հանձնարարել ընկերության ղեկավարին, որ ընկերությունը ձեռնպահ մնա ընդերքօգտագործման հետ կապված յուրաքանչյուր գործունեության իրականացումից, քանի դեռ սահմանված կարգով չի ստացել նոր ՀՄԱԳ դրական փորձաքննական եզրակացություն, եւ նախարարությանն առաջարկվել էր, որպեսզի իրականացվի... Դա երկար պատմություն է:

**Դուք շատ կարճ ներկայացրիք: Այսինքն, Դուք պաշտոնական գրություն եք ներկայացրել նախարարություն, որի բովանդակությունն այն է, որ Անուշահյանի կարելի չափագործել, բնապահպանության նախարարությունն անտեսել է Ձեր այդ առաջարկը, ճի՞շտ ենք հասկանում:**

Եկեք՝ մի քիչ այլ կերպ ձեւակերպենք: Ոչ թե Անուշահյանը չի կարելի գործարկվել, դա մեր որոշելիքը չէ: Ասում ենք՝ այս պահի դրությամբ տեսչական ստուգման արդյունքում վեր հանված խնդիրները բերել են այն իրավական հետեւանքի, որ պիտի իրականացվի նոր բնապահպանական փորձաքննություն, որի արդյունքում եթե տրվի դրական եզրակացություն, ապա այդ հանքավայրը կարող է շահագործվել: Բայց դա իրենց որոշելիքն է:

**Բայց այդպես վարչապետն էր պահանջում, որքանով տեղյակ ենք:**

Այո, դա բացարձակապես ըստ էության նույնն է, եւ տարբերությունն իրավական մեխանիզմների մեջ է, ՀՄԱԳ փորձաքննությունը եւ դրանից առաջ ընթացող գործընթացը մեր հանրապետության օրենսդրությամբ է կարգավորվում, վարչապետն ավելի զլորալ է հարցը դիտարկել, որ Անուշահյանի իրական պատկերը պիտի իմանանք, որի համար անհրաժեշտ են փորձագետներ միջազգային եւ տեղացի, եւ լուրջ համագործակցության արդյունքում պիտի ճշտվի՝ կա՞ ազդեցությունն օդի, ջրի եւ կենսաբազմազանության վրա: Խոսքն ազդեցության այն ծավալի մասին է, որ անհնարին է դարձնում հանքի շահագործումը: Վերջին հաշվով նույն բանն է, տարբերությունը մեխանիզմների, ժամանակի մեջ է եւ այլն: Մենք

չենք ասում Անուշահյանը չպիտի շահագործվի կամ այսինչ հանքը չպիտի շահագործվի, այլ ասում ենք՝ այս առկա իրողության պայմաններում պետք է իրականացվեն նոր գնահատումներ եւ նոր փորձաքննություն:

**Դուք զբաղվում եք էկոլոգիական իրավունքով, եւ դրանով զբաղվողներին քննադատում են այն բանի համար, որ Անուշահյանը մեր հանքարդյունաբերության մեջ ամենադրական օրինակը կարող է լինել, եւ Դուք բոլորը լծվել եք Անուշահյանի դեմ սեւ «փիհառով», մինչդեռ մյուս հանքերը, որոնք խայտառակ ձեւով են շահագործվում, դրանց մասին ձայն չեք հանում, որովհետեւ պատվեր կա (խոսքը Ձեզ չի վերաբերում) տարբեր կառույցների կողմից, որ Անուշահյանի դեմ հակաքարոզչություն իրականացվի: Ինչո՞ւ եք մեկնաբանությունը:**

Նախ՝ ես պիտի խոսեմ տեսչական մարմնի շրջանակում իրականացված գործունեության մասով: Մենք վերջին ժամանակներս երկու հանքավայր ենք հասցրել ստուգել՝ Անուշահյան եւ Ազատեկ, որ ոսկու հանքավայր է Վայոց ձորի մարզում:

Անուշահյանի դեպքում եղել է որոշում ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, այսինքն՝ առաջարկություն նախարարությանը:

Ազատեկի վերաբերյալ եղել է առաջարկություն էներգետիկայի նախարարին՝ դադարեցնել գործունեությունը: Հիմա մենք ավարտել ենք Քաջարանի կոմբինատի փորձաքննությունը: Ես, ցավոք, իրավունք չունեն ներկայացնել բովանդակային տեղեկություններ՝ Քաջարանում իրականացված ստուգման արդյունքների վերաբերյալ:

**Վախենամ, որ արդյունքների համաձայն Քաջարանի կոմբինատը պիտի դադարեցնի իր գործունեությունը: Պարզապես ի՞նչ կլինի դա Հայաստանի համար:**

Ես չեմ ուզում որեւէ դատողություն անել: Նշեմ հետեւյալը. խոսքը չի վերաբերում կոմբինատի գործունեությունը հենց այնպես դադարեցնելուն: Տարբեր շերտեր կան, որ ստուգման արդյունքում վեր հանված ինֆորմացիան կարող է այդ շերտերին տեղեկատվությամբ, այսպես ասած, սնուցել: Մենք իրականացրել ենք ստուգումն ամենաբարձր մակարդակով, մեզ ավելի հաճախ քննադատում են Անուշահյանի առիթով, որ իրենց մոտ ստուգումներ ենք իրականացրել բոլոր դետալներով: Եվ վստահեցնում են, որ Քաջարանի կոմբինատում իրականացվել է ստուգում բոլոր դետալներով, ու այդ տեղեկատվությունը պետք է ամփոփվի այս տասը օրվա ընթացքում, եւ պետք է դրան տրվի իրավական հետեւանք: Ես պատրաստվում էի վարչապետի՝ արտասահմանից վերադառնալուց հետո խնդրել հանդիպում, որ ներկայացնեմ խնդիրները, որպեսզի ի վերջո հասկանանք, թե լուծումներն ինչպես պետք է տրվեն:

Իմ աշխատանքի գործունեությունը հրապարակային է, դա տեսանելի է, բոլորը գիտեն, եւ այդ աշխատանքի հետեւանքներն ու արդյունքները սահմանված կարգով պետք է ներկայացվեն հանրությանը: Քաջարանի պարագայում որոշում կայացնելու պատասխանատվությունն այս տասը օրվա ընթացքում չպետք է թողնել տեսուչների վրա: Եթե տեսչական մարմնի ղեկավարն այս փուլում այս պահին աշխատանքից ազատվել է՝ առանց հաշվի առնելու այս բոլոր գործոնները, նշանակում է՝ պետք է լինի կոնկրետ անձ, որ այս հարցի վերաբերյալ իրավական եւ քաղաքական որոշումներ ընդունի: Այստեղ խնդիրները տարբեր շերտերով են, միայն բնապահպանական չեն: Ես բոլոր խնդիրները պատրաստվում էի ներկայացնել վարչապետին եւ զուգահեռաբար քննարկել Տիգրան Ավինյանի առաջարկությունն աշխատանքից ազատվելու դիմում գրելու վերաբերյալ: Սակայն շաբաթն ուրբաթից շուտ եկավ:

**Ի՞նչ եք կարծում, Անուշահյանը պե՞տք է շահագործել, թե՞ ոչ: Մի կողմից՝ եթե**



# Ամենայն հայոց մատարոյին՝ Յոզիանուս Զեքիջյանին՝ Ծննդյան 90-ամյակի առթիվ

Խորհրդային իշխանության հաստատումից հետո համայն հայության հայրենիք Յայաստանում սկիզբ առավ մշակութային կյանքի արտակարգ, աննախադեպ եռուզեռ: Մայր հայրենիքից հեռու ապրող թուրքահայերը, Չարենցը, Իսահակյանը, Փանոս Թերլեմեզյանը ու Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Սպենդիարյանն ու Ռոմանոս Մելիքյանը, Վահրամ Փափազյանն ու Յրաշյա Ներսիսյանը, Գոհար Գասպարյանն ու Յայկանուշ Դանիելյանը, Արամ Խաչատրյանը եւ շատ-շատերը խանդավառ լծվեցին հայ ազգային արվեստի զարգացմանը:

Մեծերի այս շարքում է ստամբուլահայ ֆեոդոնցալ խմբավար, անգլագական սիմֆոնիկ դիրիժոր, կոմպոզիտոր, պրոֆեսոր, հասարակական գործիչ, ազնվագար մարդ Յոզիանուս Զեքիջյանը, ով 1961-ից դարձավ հայաստանաբնակ եւ նույն տարում՝ նոյեմբերի 27-ին, Երեւանում կայացած իր առաջին համերգի օրը համարում է իր երկրորդ երաժշտական ծննդյան օրը: Մայրը բուն ծննդյան օրը՝ 1928թ. դեկտեմբերի 23-ին, պարզեւել է կյանք՝ իր առաջին առավոտով, ամբողջ լույսով ու սովորով, որ հետո դարձել է ճակատագիր: Իսկ երբ հայրենադարձն աստվածաշնորհ ամեն օրը բացվող լույսի հետ գտնում է հայրենի երկիրն ու ժողովրդին, թոթափում է հոգուց օտար նստվածքները եւ սրտով սնվում իր ժողովրդի զարկերակից, լցվում նրա մտածմունքով ու մերվում նրա առօրյային, իսկապես ապրում է հոգեւոր վերածնունդ:

Պատահական չէ, որ 2015թ. ապրիլի 24-ին «24/04» նվագախմբով Երեւանի Հանրապետության հրապարակում իրականացրած ֆանտաստիկ համերգը՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին, կրում է «Վերածնունդ» խորագիրը, որին մասնակցեցին աշխարհի 43 երկրից հրավիրված 125 երաժիշտները, մենակատարները միջազգային մրցույթների դափնեկիրներ էին, իսկ համերգը բաղկացած էր չորս մասից, եւ հնչեցին միայն հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համերգի առաջին մասի դիրիժորն էր Յոզիանուս Զեքիջյանը, իր նախնիների ցուցադրվում էին Արեւմտյան Յայաստանի պատմական բնակավայրերի պատկերներ, իսկ աշխարհահռչակ ողջախոսի հումանիստների իմաստախոսությունները բարձրաձայնում էին հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների պաշտպանությանն ուղղված ուղերձներ:

Արամ Խաչատրյանը, բարձր գեղատեսչական Զեքիջյանի համաշխարհային ընդգրկումն երաժշտական գործունեությունը, մշել է մի բանաձեւ՝ «**Համամարդկայինը՝ ազգայինի մեջ**», ընդունել է, որ մատարոյն ազատ կարող է եվրոպական լավագույն դասիկների զարդը լինել, խմբերգային արվեստում ձեռք բերած նրա մասնագիտական մակարդակը ողջ աշխարհում մեծ համբավ ունի: Յայկա-

կան ակադեմիական կապելլային հատուկ են մարդկային բոլոր հույզերը՝ նուրբ երգակոտորույնից մինչեւ շեքսպիրյան բարձրախարհիկ կրքեր, թեթեւ կատակից մինչեւ լարված դրամատիզմ:

Զեքիջյանի կերտած արվեստը սահմաններ չի ճանաչում: Նշենք նրա նորարարական գյուտերից միայն մեկը՝ օպերաների համերգային կատարումներն ավանդույթ դարձնելը:

Որ նա հայ է միջազգային երաժշտական սերունդի երեւելիներից է, ապացուցենք թվերի լեզվով: Յայաստանի պետական երգչախմբի երկարամյակը հարուստ է ու բազմազան՝ ավելի քան 800 ստեղծագործություն, այդ թվում՝ խոշոր կտավի 40 օրատորիա եւ օպերաներ: Մատարոյն ունկնդիրների դասին է

Շնորհապարտ են Չեզ, պաշտելի՛ մատարո

Մատարոյ Զեքիջյանը նաեւ իմ խմբավարն էր: 1962-1968 թթ. նա միաժամանակ Երեւանի պետական կատարողական երգչախումբն էր վարում: Շուտով քառամյա երգչախումբը լայն ճանաչման հասավ, երբ Զեքիջյանը կայանաձեռնեց միջազգային համբավ՝ արժանանալով առաջին մրցանակի ու ոսկե մեդալի եւ դարձավ Յայաստանի երաժշտական այցեքարտը:

1967-ին ընդունվեցի մայր բուհի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը, ուր դասավանդում էին հայոց կաճառի գերակա ու իմաստուն, ինտելեկտուալ մեծ ներուժի տեր իսկական անդամներ



ներկայացրել 4000-ը վաղուց գերազանցող համերգ: Որպես կոմպոզիտոր՝ հեղինակել է մի շարք վոկալ-սիմֆոնիկ երկեր, կատարել է երգչախմբային բազմաբանակ մշակումներ, ամբողջ աշխարհում առաջնորդել 56 սիմֆոնիկ նվագախումբ:

Զեքիջյանը կրթությամբ նաեւ ինժեներ-քիմիկոս է, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոս, նվագում է 4 գործիք՝ դաշնամուր, շվի, հոբոյ, կլառնետ, ազատ տիրապետում է 5 լեզվի: **Այս պարագայում հիշեցի Ս. Խորենացուն. «Կրթությունն ամեն ինչ է»:**

Յոզի. Զեքիջյանը պնդում է, որ ի սկզբանե իր կյանքի բուն նպատակն եղել է ծառայել իր ժողովրդին, իսկ գործունեության գլխավոր առաքելությունն է աշխարհին մատուցել հայկական երաժշտական արվեստը:

Սկրտիչ Մկրյանը, Գուրգեն Սեւակը, Վաչե Նալբանդյանը, Գեւորգ Ջահուկյանը եւ այլք: Դասախոսական հրաշագործության հեղինակ էր նաեւ անմահ, կանացիության կատարելություն, սիրված գրող – հոգեբան Էլզա Գրին – Աբրահամյանը: Արտասահմանյան գրականության անտիկ շրջանը մեկնաբանելիս դերասանի վարպետության դասերով ցնցում էր Լեւոն Ներսիսյանը՝ ճիշտ Յրաշյա Ներսիսյանի դիմապատկերով տաղանդաշատ որդին, ով տեղով մեկ շեքսպիրյան ոճի դերասան էր եւ պատմական մի նախադասություն հիշատակ թողեց մեզ. «Յայ բեմին երկրորդ Ներսիսյան պետք չէ»: Յայագիտության ոլորտից այլ նվիրյալներ եւս կրթեցին-կոփեցին մեր աշխարհայացքն ամենագիտակ զինվածությամբ:

Իմ ուսանողական կյանքի շեմին անակնկալ ներթափանցեց Յոզիանուս Զեքիջյանը

**Անհայրենիք արվեստ չկա: Արվեստը պետք է ապրի տանտիրոջ պես, Լինի իր օջախի, ծխի վերջը, արմատներով իջնի հողի մեջ, սաղարթով թեւածի իր երկնքում:**  
**Յոզիանուս Զեքիջյան**

առաջին կուրսի սեպտեմբերի երկրորդ կեսին, երբ համալսարանի երգչախումբը համալրելու պատրվակով քննեց մեր բաժնի ուսանողների ձայնային բնատուր տվյալները: Ահա ես եւս ակնածանքով մտա համալսարանի մեծ դահլիճի ետնաբեմի դաշնամուրային սենյակը: Նիհար, ճաղատ, երկար ու նուրբ մատներով, խորաքնին հայացքով մատարոյն դաշնամուրի ստեղծագործին մատնահարում էր եւ առաջարկում ճիշտ երգել նվագածը, որը դժվար չէր ինձ համար, քանի որ դաշնամուրային ու խմբերգային յոթնամյա կրթություն ունեի: Առաջին պահի սառնությունն անմիջապես կտրվեց նրա դրվատանքից, եւ ընդգրկվեցի ալտի խմբում: Ուղիղ մեկ տարի հափշտակված երգեցի մեր երգչախմբում եւ ոչ մի դիտողություն չստացա խմբավարի կողմից:

Միշտ ապշում էինք, թե շրջահայաց մատարոյի սուր ականջը մեծ դահլիճի բեմահարթակի հեռավորությունից ինչպե՛ս էր իսկույն որսում դահլիճում նստած ուսանողական բազմության միջից միայն մեկ կատարողի «ֆալշ» երգեցողությունը, տեղնուտեղ կտրուկ խմբերգն ընդհատում էր եւ խստապահանջ ուղղում: Այդ երկարավուն ու շքեղ դահլիճում հաճախ փորձերին որպես մեներգիչներ մեզ միանում էին նաեւ Լուսինե Ջաքարյանը, Խորեն Պալյանը, Ռուբեն Մաթեոսյանը...

Ընդմիջումներին մեր խնդրանքով վարպետն իր խոսքը համեմուն էր կենսապատման բախտորոշ պատահիկների վերհուշով ականավոր Մակար Եկմայանի, ամենահայ Կոմիտասի եւ այլ պատվելիների մասին: Այդ պահերին առնում էր աստվածային վերացած կերպարանք, աչքերում անմահության կրակներ էին բոցկլտում: Հզոր էներգիայով Զեքիջյանը հասնում էր կրթող ներշնչանքի եւ նրանց մասին ակնարկային առիթնող կարճառոտ բնութագրություններով թովում մեզ:

Մեծ բախտ էր նման անձանձիր ու գործունյա, ինքնատիպ աշխատանո՞ւ ունեցող մարդուն կյանքում հանդիպելը, ով մեզ վարակում էր տիտանական հայի անկտորում ուժով, անդուլ ժրաջանությամբ, դրոյում ողջ երգչախմբով դառնալու մի բռունցք, մի շունչ, մի հոգի, մի երգող կոկորդ: Ուսանողներին հորդորում էր հաղթահարել երգեցողության ցանկացած խրթնություն եւ հասնել վարպետության: Մատարոյն չէր սիրում լսել անհիմն դժգոհության որեւէ դրսեւորում, քանի որ նա կանխապես գիտեր բոլորիս բացարձակ հնարավորությունները, **էջ 8**

**Շենք շահագործում, մենք ամենամեծ ներդրումն ենք վաճում, մյուս կողմից՝ եթե շահագործում ենք, ինչպես շատ բնապահպաններ են նշում, լուրջ խնդիրներ կան: Այս հարցն ինչպե՞ս պիտի լուծվի:**

Ըստ էության դա «այո»-ի եւ «ոչ»-ի խնդիր չէ: Սա պատասխանատվության խնդիր է: Եթե լեզուի մոտեցումն ձեւավորված կառավարությունը, որն ունի քաղաքական, սոցիալ-տնտեսական պատասխանատվություն, բոլոր տնտեսական հարցերի վերաբերյալ պիտի ունենա որդեգրված քաղաքական դիրքորոշումներ, որոնք հիմնված լինեն տնտեսական եւ այլ բաղադրիչների վրա՝ բնապահպանական, սոցիալական, տնտեսական, քաղաքական եւ այլնի մասին, պետք է բաց տեքստով նստել եւ խոսել: Ես չեմ ուզում որեւէ ներքին ինֆորմացիա տրամադրել, տարբեր քննարկումների արդյունքում առաջացած առաջարկությունները ներկայացնել եւ այլն: Պարզապես ունեն իմ մտեցումները: Եթե դրանք չեն հա-

մապատասխանում կառավարության որդեգրած կուրսին՝ շատ նորմալ է: Առանցքային, սկզբունքային հարցն այդտեղ չէ, այլ այնտեղ, որ պետք է մատչելի կերպով եւ ազնվորեն խոսել այն հարցերի մասին, որոնց շուրջ կարծիքների անհամատեղելիության պատճառով անհնարին է դարձել իմ աշխատանքը կառավարությունում: Դա չի նշանակում, որ ես ճիշտ եմ, մյուսը սխալ է, մեկն ավելի սկզբունքային է, մեկը՝ նվազ սկզբունքային: Դա ընդամենը մտեցումների եւ քաղաքական պատասխանատվության հարց է: Պարզապես այդ մասին հիմա պետք է խոսել: Ինչո՞ւ, որովհետեւ հիմա ես որոշում կայացրել տեսչության ղեկավարին ազատել աշխատանքից եւ ոչ թե մեկ ամիս հետո:

Նշանակում է հիմա պետք է խոսել այդ մասին: Հստակ հիմնավորումներ են պահանջվում. պիտի լինի դիրքորոշում, հիմնավորում այդ դիրքորոշմանը, կոնկրետ պատասխանատուներ, մասնագետներ, իրավաբաններ, ովքեր մասնագիտական առումով պատասխանատվություն կստանան նաեւ պիտի քաղա-

քական պատասխանատվություն լինի եւ այդ հարցերի հանրային քննարկում: Հակառակ դեպքում ստացվում է այսպիսի դիտմանս, երբ ոչ ոք չի հասկանում ի՞նչ է կատարվում, ինչո՞ւ է կատարվում:

**- Շատ հակիրճ մի պատասխան ենք ակնկալում. չե՞ք զգում, որ Անուշարի շահագործման դեմ հստակ հակաքաղաքականություն է տարվում, թե՞ այդպես չէ...**

-Ներքեցե՛ք, երբ ժամանակին բնապահպանները թեղուտի դեմ էին պայքարում, նույն տերմինաբանությունն էր շրջանառվում. սա լավագույնն է, դա դուք չեք հասկանում, երբ սկսեցե՛ք շահագործել կոնսենք, ինչո՞ւ միայն թեղուտը, մյուսների մասին չեք խոսում: Իրականում բոլորի մասին էլ խոսվում է: Ուղղակի դա պիտի հստակ տեսնել: Սա ես ներկայացնում եմ ընդհանուր ձեւակերպում, ոչ թե որպես տեսչական մարմնի ղեկավար կամ պաշտոնաթող ղեկավար: Հանուն արդարության պիտի տեսնել կամ ուղղակի կարող մամուլը, որի մասին ինչ ինֆորմացիա կա: Այս յոթ ամսում երեք հանքավայր ենք հասցրել

ստուգել՝ երկու գիզանտ՝ մեկն իրոք գիզանտ՝ Չանգեգուրի պղնձամուլիթեմային կոմբինատը, մյուսը՝ Անուշարը, շահագործման փուլում է գտնվում, ուստի այս վերջինի ստուգումն արագ ստացվեց:

**-Կարծում եմ, որ այս վեց-յոթ ամսում Դուք այնքան ինֆորմացիա եք կուտակել, որ անպայման Ձեր հետազոտ գործունեության մեջ շատ օգտակար կլինի, այնպես որ կարելի է հեռանալ նաեւ շնորհակալություն հայտնելով:**

-Միանշանակ այդպես է: Խոսքը միայն ինֆորմացիայի մասին չէ, նաեւ քաղաքական համակարգում կամ պետական-կառավարման համակարգում պետական-կառավարման համակարգում մասին չեք խոսում: Ես արդեն նշեցի, որ սա բոլորովին այլ մոլորակ է, եւ այդտեղ մասնագիտական որակավորումները եւ գիտելիքներն ուղիղ համեմատական են աշխատանքային փորձի հետ: Հնարավոր չէ մի ոլորտից գնալ մի այլ ոլորտ՝ եւ այդտեղ իդեալական պատկերացնել իրավիճակը:

# Լեւոն Աղասյանը ոսկե մեդալ է նվաճել Ղազախստանում



Աթլետիկայի Հայաստանի հավաքականի անդամ Լեւոն Աղասյանը ոսկե մեդալ է նվաճել միջազգային մրցաշարում: Ղազախստանում կայացած Օլգա Ռիբակովայի անվան միջազգային մրցաշարում Աղասյանը տղամարդկանց եռացատկում գրանցել է 16.63 արդյունք եւ գրավել առաջին տեղը:

Լեւոն Աղասյանը Ղազախստանում կայացած Օլգա Ռիբակովայի անվան միջազգային մրցաշարում Աղասյանը տղամարդկանց եռացատկում գրանցել է 16.63 արդյունք եւ գրավել առաջին տեղը: Սա Լեւոնի լավագույն արդյունքն էր:

# Ամենայն հայոց մաեստրոյին՝ Հովհաննես Չեքիջյանին՝ ծննդյան 90-ամյակի առթիվ

Մեծարգո արվեստագետն ուսանողական մեր օրերը տոգորեց ազգային կենսահորդ երգերով, կոմիտասա-սիրությամբ, այլալեզու օպերաների եւ օրատորիաների ներգործում դիպաշարերով ու ինքնաբերաբար երգվող զմայելի մեղեդիներով... Գուրգուրոտ սիրով անդրադառնում են համալսարանական երանելի օրերին. սիրելի խմբավարի աչալուրջ դեմքը, ծիգ կերպարանքը՝ դիրիժորական մոզական փայտիկը ծեռքին, պատկերանուն են որպես երաժշտության սրբազան առաքյալ, ով սատար է լինում ինձ առանձնապես հոգեկան մորմոքի պահերին: Մայրուհի պատվիրաններով ու անձնական վսեմ կենսակերպով արթուն է պահում խիղճն եւ մաքրագործում որպես անամպ, լազուր երկնքի ֆոնին շողողացող դեղձան արեւ: Իր մասնագիտական սրբասուրբ դավանանքով ու հայրենաշունչ հայկականությամբ եւրոպայի լցնում է բուժիչ բալասան հիշեցնող երաժշտության տոնական եւ քաղցրալուր դողանցներով, սրտի ու մտքի բարեպաշտությամբ: Այսօր հարգարժան Վարպետը տարեց է, բայց էլի ստեղծագործական որոնումների տարերքի մեջ է, երիտասարդական ակունքով, խորհրդածություններով սթափ է եւ գերիմաստուն: Մաղթենք նրան քաջառողջություն, արեւատություն, խմբավարման ու նվագավարման նոր արարչագործություններ՝ ի շահ հայ երաժշտավեստի վերելքի ու երաժշտական կրթության համասփյուռ տարածման: Տե՛ր, կեցցո՛՛ղ Հայս եւ նրա փառապանծ զավակ Հովհաննես Հարությունի Չեքիջյանին՝ լույսի, համճարի, երաժշտության պայծառ Լուսաստղին:

Սա Լեւոնի լավագույն արդյունքն էր:

# Կարինե Հովսեփյան. «Պիտի հիմնովին փոխվի վերաբերմունքը հանրակրթության նկատմամբ»

Դպրոցից, որ ավելի շատ աշակերտներին «ռոբոտացնում» է, բթացնում, քան իրականում օգուտ տալիս, որոնց ժամանակ վերանում է վերլուծական մտածողությունը, թուլանում է ստեղծագործական միտքը: Նաեւ պիտի հաշվի առնել, որ դասարանում նստած 35 աշակերտների կեսը նվազ ընդունակություններ ունի, տարբեր են նրանց ընտանեկան պայմանները: Երեխաների մի մասը մեծանում է ծնողներից մեկի բացակայությամբ, հայրը՝ ապրուստ հայթաթելու նպատակով արտերկրում է եւ այլն: Միշտ մեզ համար սոցիոլոգիական փոքրիկ ուսումնասիրություններ ենք կատարում, եւ պիտի ասենք, որ որոշ դեպքերում պատկերը տխուր է: Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա դրանք պիտի գրեն այնպիսի մարդիկ, ովքեր եւ մանկավարժ են, եւ հոգեբան, եւ տվյալ ոլորտի հմուտ գիտակ:

Դպրոցում գործող գնահատման համակարգը էլ պիտի փոխվի: Մի խոսքով՝ շտկելու շատ բան կա, որպեսզի երեխան հաճույքով դպրոց մտնի եւ նույն հաճույքով սովորի:

**Ինչպե՞ս է դպրոցի ֆինանսավորումը: Տարբեր ամբիոններից միշտ էլ խոսվել է ուսուցչի ցածր աշխատավարձի մասին: Արդարացնո՞ւմ է աշակերտ-տողով ֆինանսավորումը:**

Մեր աշակերտների թիվը մեծ է, ուստի ֆինանսավորումը բավարար է: Նույնիսկ տարբեր վերջին մեր տնտեսած գումարով կարողացել ենք տեխնիկա գնել, ինչի անհրաժեշտությունը կար՝ տարբեր համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ սարքեր, պատճենահանման հարմարանք: Եվ դա այն բանի շնորհիվ, որ վերջին երեք տարում ավելորդ ծախսեր չէինք կատարել: Երբ տարբերակներ տեղի ունեցավ դպրոցի խորհրդի նիստը, առաջարկեցի մեր կուտակած գումարի հաշվին թույլտրել վճարել 13-րդ աշխատավարձ՝ մեկ աշխատավարձի չափով: Սա ավելի շատ խրախուսանք է, որ մանկավարժին պարտավորեցնում է ավելի պատասխանատվությամբ:

Մանկավարժներին ընտանիքում են մեծացել: Ծնողներս մոտ կես դար ուսուցչություն են արել, տեսել են, թե ինչ նվիրվածությամբ են սերունդներ դաստիարակել, ինչ հարգանքի են արժանացել հասարակության կողմից՝ աշակերտության եւ նրանց ծնողների կողմից: Ինչպես չհիշել Ավետիս Իսահակյանի խոսքերը. «Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հոգր է այն ազգը, որ ունի լավագույն ուսուցչություն: Ծնողները երեխային տալիս են մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, բարի կամք եւ բարձրագույն իդեալներ»:

**Համակարգչային տեխնիկայի զանգվածային մուտքը մեր կենցաղ, հարմարավետություն ստեղծելով, նաեւ բացասաբար անդրադարձավ սովորողների, մասնավորապես, աշակերտության մտավոր աշխարհի վրա:**

Մանկավարժների ընտանիքում են մեծացել: Ծնողներս մոտ կես դար ուսուցչություն են արել, տեսել են, թե ինչ նվիրվածությամբ են սերունդներ դաստիարակել, ինչ հարգանքի են արժանացել հասարակության կողմից՝ աշակերտության եւ նրանց ծնողների կողմից: Ինչպես չհիշել Ավետիս Իսահակյանի խոսքերը. «Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հոգր է այն ազգը, որ ունի լավագույն ուսուցչություն: Ծնողները երեխային տալիս են մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, բարի կամք եւ բարձրագույն իդեալներ»:

**Համակարգչային տեխնիկայի զանգվածային մուտքը մեր կենցաղ, հարմարավետություն ստեղծելով, նաեւ բացասաբար անդրադարձավ սովորողների, մասնավորապես, աշակերտության մտավոր աշխարհի վրա:**

Մեծարգո արվեստագետն ուսանողական մեր օրերը տոգորեց ազգային կենսահորդ երգերով, կոմիտասասիրությամբ, այլալեզու օպերաների եւ օրատորիաների ներգործում դիպաշարերով ու ինքնաբերաբար երգվող զմայելի մեղեդիներով... Գուրգուրոտ սիրով անդրադառնում են համալսարանական երանելի օրերին. սիրելի խմբավարի աչալուրջ դեմքը, ծիգ կերպարանքը՝ դիրիժորական մոզական փայտիկը ծեռքին, պատկերանուն են որպես երաժշտության սրբազան առաքյալ, ով սատար է լինում ինձ առանձնապես հոգեկան մորմոքի պահերին: Մայրուհի պատվիրաններով ու անձնական վսեմ կենսակերպով արթուն է պահում խիղճն եւ մաքրագործում որպես անամպ, լազուր երկնքի ֆոնին շողողացող դեղձան արեւ: Իր մասնագիտական սրբասուրբ դավանանքով ու հայրենաշունչ հայկականությամբ եւրոպայի լցնում է բուժիչ բալասան հիշեցնող երաժշտության տոնական եւ քաղցրալուր դողանցներով, սրտի ու մտքի բարեպաշտությամբ: Այսօր հարգարժան Վարպետը տարեց է, բայց էլի ստեղծագործական որոնումների տարերքի մեջ է, երիտասարդական ակունքով, խորհրդածություններով սթափ է եւ գերիմաստուն: Մաղթենք նրան քաջառողջություն, արեւատություն, խմբավարման ու նվագավարման նոր արարչագործություններ՝ ի շահ հայ երաժշտավեստի վերելքի ու երաժշտական կրթության համասփյուռ տարածման: Տե՛ր, կեցցո՛՛ղ Հայս եւ նրա փառապանծ զավակ Հովհաննես Հարությունի Չեքիջյանին՝ լույսի, համճարի, երաժշտության պայծառ Լուսաստղին:

Իստակ կարելի է, բայց իմ ասածը չափազանց հեռու է իրականությունից: Պարզապես ընտանիքում ծնողը պիտի հետեւի, որ երեխան ավելորդ ժամանակ չանցկացնի համակարգչի առջեւ: Ցավալի է նկատել, որ դեռահասները հեռացել են գեղարվեստական գրականությունից, տպագիր խոսքից: Նախկինում մեկի տուն մտնելիս զարմանում էինք, որ գրապահարան չկա: Նորիդային ժամանակներում, դասղեկ եղած ժամանակ, այցելում էի դասարանիս աշակերտների ընտանիքները, պարզելու՝ երեխան որտե՞ղ է դաս սովորում, գրապահարան ունե՞ն, գրասեղանը որտե՞ղ է տեղադրված: Դա ոգետրում էր ծնողներին, իսկ իմնա՞: Երեւի այժմ ընտանիքում համակարգչային տեխնիկայով ավելի են հպարտանում, քան գրքերով: Զգիտե՛մ՝ ինչ հնարներով կարելի է վերականգնել ընթերցասիրությունը երեխաների մեջ: Դա միայն դպրոցի խնդիրը չէ: Ծնողը էլ պիտի նախանձախնդիր լինի այդ գործում: Ծնող-դպրոց-աշակերտ եռանկյանությունը մի նպատակի պիտի միտված լինի. այսպես ասեն՝ նույն մեխիսի խփեն: Ամսվա ընթացքում մի օր բաց դռների օր է: Ծնողները կարող են դպրոց այցելել, դասախոսների մասնակցել: Ծնողը միշտ պիտի մոտ լինի դպրոցին: Հաճախ կրկնում են այն միտքը, թե երբ մանկավարժների է ծնողների գործերը մի ամբողջ են գնում, արդյունքը միշտ առկա է լինում:

**Ի՞նչ կավելացնեք ասվածին՝ որպես վերջաբան, մանավանդ որ տարին մոտ է սկսվում:**

Ուզում են, նախեսառաջ, մաղթանքս հղել ուսուցիչներին, աշակերտներին, նրանց ծնողներին: Բոլորին, բոլորին առողջություն եւ հաջողություն են մաղթում, նաեւ ցանկանում, որ առկա դժվարությունները հաղթահարվեն սիրով, միասնության եւ համերաշխության ուժով: Թող հայ ժողովրդի կյանքում 2019-ը լինի դրական փոփոխությունների տարի:

Չեքիջյանի ընտանիքում են մեծացել: Ծնողներս մոտ կես դար ուսուցչություն են արել, տեսել են, թե ինչ նվիրվածությամբ են սերունդներ դաստիարակել, ինչ հարգանքի են արժանացել հասարակության կողմից՝ աշակերտության եւ նրանց ծնողների կողմից: Ինչպես չհիշել Ավետիս Իսահակյանի խոսքերը. «Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հոգր է այն ազգը, որ ունի լավագույն ուսուցչություն: Ծնողները երեխային տալիս են մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, բարի կամք եւ բարձրագույն իդեալներ»:

## Ի գիտություն

**Այունյաց երկիր**  
Հիմնադիր և հրատարակիչ  
«Այունյաց աշխարհ» ՄԴԸ  
Հասցե՝  
ՀՀ, Մյունխենի մարզ,  
ք. Կապան, Շահումյան  
20/32

Նրանք, ովքեր չեն հասցրել 2019թ. համար բաժանորդագրվել «Այունյաց երկիր» թերթ, կարող են բաժանորդագրվել հիմա՝ դիմելով խմբագրություն 077-45-90-47 հեռախոսահամարով:  
**Թերթի տարեկան բաժնեգումարը 10.000 դրամ է:**  
**Թերթն ամեն ամիս կունենա առնվազն երեք թողարկում:**  
«Այունյաց երկիր»

**Շնորհակալություն** են հայտնում ուրուլոգներ Ս. Գրիգորյանին, Վ. Մանասյանին, անեստեզիոլոգներ Ա. Շահբազյանին եւ Ս. Գասպարյանին՝ իմ որդուն՝ Գարեգին Թելմանի Հայրապետյանին հմուտ մասնագիտական բժշկական օգնություն եւ արտագաղ իմ հոգատար վերաբերմունք ցույց տալու համար: Մայրական երախտագիտություն՝ Միշա Գրիգորյանի ծնողներին իր գործին գիտակ որդի դաստիարակելու եւ կրթելու համար, ով իր գործողություններով հիվանդներին հույս ու հավատ է ներշնչում:  
**Լյուդմիլա Գրիգորյան**

**Այունյաց երկիր**  
Հիմնադիր և հրատարակիչ  
«Այունյաց աշխարհ» ՄԴԸ  
Հասցե՝  
ՀՀ, Մյունխենի մարզ,  
ք. Կապան, Շահումյան  
20/32  
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):  
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:  
Գրանցման վկայականը՝ 01U 000231:  
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:  
Տպագրական՝ 1150, գինը՝ 100 դրամ:  
Ստորագրված է տպագրության 30.01.2019թ.: